Ինչպես մոտ 350 տարի առաջ Իսրայել Օրին էր արեւմտյան քրիստոնյա երկրների մայրաքաղաքներում համոզում, որ օգնեն աշխարհի առաջին քրիստոնյա երկրի՝ Հայաստանի ազատագրմանը, այնպես էլ Սամվել Կարապետյանն է ուզում համոզել, որ ՔՊ-ին աջակցության արդյունքում ԵՄ-ն կործանելու է աշխարհում առաջին քրիստոնեական երկիրը:

Կարդացեք՝ էջ 5

Երբ որեւէ կառուցվածքում դիմադրության կետերի քանակը փոքրանում է, մեծանում է փլուզման վտանգը: Փոխաբերական ասած՝ վթարային շենքում արթնանալն ու չգործելը հավաքական անպատասխանատվություն են: Բոլոր նրանք, ովքեր սա տեսնում են, պետք է գործեն, ու բացարձակ կարեւոր չէ՝ քաղաքական գործիչ են, թե տնային տնտեսուհի:

Կարդացեք՝ էջ 7

Դրա շարունակությունն այն է, ինչն այսօր տեղի է ունենում Նախիջեւանում: Դա նաեւ մեր չարձագանքելու արդյունքն է, ադրբեջանցիներն այնքան են լկտիացել, արդեն ֆորումներ են անցկացնում, այսպես կոչված, Արեւմտյան Ադրբեջան վերադառնալու համար: Մինչդեռ այդ հարցը կփակվեր, երբ դեռ սահմանազատման ժամանակ պահանջեինք:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 100 (4235), 20 հունիս, շաբաթ, 2026

www.hraparak.am

Երեւանի պետական համալսարանի դասախոս, քաղաքագետ Ալեն Ղեւոնդյանին առաջադրված մեղադրանքի հիմքում դրվել է ոչ թե այն գրառումը, որը տարածվել էր նրա ձերբակալության ժամանակ, այլ բոլորովին ուրիշ տեքստ՝ նույնքան անմեղ: Վարչական հսկողության տակ գտնվող Ղեւոնդյանը, ըստ ՔԿ-ի, «իշխանությունը զավթելուն եւ սահմանադրական կարգը բռնի տապալելուն ուղղված հրապարակային կոչ» է արել, դատարանի որոշմամբ նրան արգելվել է հրապարակումներ անել, հավաքների մասնակցել, սոցցանցում «հաղորդակցվել»: Իսկ մեղադրանքի հիմքում հունիսի 2-ի գրառումն է. «Ընդդիմադիրներ ջան, եթե դուք չեք պատրաստվում գալիք ԱԺ-ում ընդդիմադիրներ լինել, երեկվանից արդեն պետք է ինստիտուցիոնալ պատրաստ լինեք ամենից կոշտ հետընտրականի: Նիկոլը կարմիր գիծ չունի, իր քաղաքական կենսագրությունը սկսել է 2008-ի մարտի 1-ին, արյամբ: Հետո իբր տեղը չէին գտնում ... Ես հույսս չէի դնի դրսի որեւէ օգնությանը, ավելին՝ դրսի օգնությունը հիմա քաղաքական վարկեր են հետո: Դա ՀՀ-ի լուծարումն է. բանաձեւն էլ են արդեն ուրվագծել: Սա պետք է հաշվի առնել: Ի դեպ, Նիկոլի հետ են ռեգիոնալ ու եվրո մի քանի պետության հատուկ ծառայություններ: ՀՀ արտաքին հետախուզական ծառայությունը՝ վկա: Ի դեպ, հետընտրականի համար հատուկ մասնագիտականներ են պետք»: Երեկ եւս մի գործչի ձերբակալեցին՝ արտահայտվելու համար, ԱԺ նախկին պատգամավոր Ռուբեն Հակոբյանին:



Սամվել Կարապետյանի վերջին հարցազրույցից պարզ դարձավ, որ ընդդիմությունը վերցնելու է մանդատները, սպասում են ՍԴ որոշմանը, որից հետո այդ մասին հայտարարություն կինչի: Կարապետյանը հայտարարեց, որ «մանդատները չվերցնելու» նարատիվը զարգացնում են իշխանությունն ու նրա աջակից ուժերը: Քոչարյանի թիմը նույնպես կողմ է մանդատները վերցնելուն: Ընդդիմության այս որոշումը հակասական տրամադրություններ է առաջացրել ՔՊ-ում. ոմանք ցնծում են, որ մարդագողության ճանապարհով սահմանադրական մեծամասնություն կզավթեն, ոմանք կարծում են, որ իրենք մեծամասնության կարիքը չունեն, Սահմանադրությունը կարող են նաեւ 300 հազար ստորագրությամբ դնել հանրաքվեի եւ առանց ընդդիմության՝ Վրաստանի պես, յոլա գնալ, հատկապես ունեն Արեւմուտքի աջակցությունը, եւ քաղաքական ճգնաժամի մասին խոսք լինել չի կարող: Սակայն Կարապետյանի հայտարարությունը միանշանակ չի ընդունվել ընդդիմության դաշտում, ոմանց համոզմամբ՝ դա չի նպաստելու ընդդիմադիր դաշտի համախմբմանը, եւ հանրության մի մեծ հատված էլ խիստ դժգոհ է մնալու:

Բողոքի տարբեր ձեւեր կան

Նիկոլ Փաշինյանը եւ ՔՊ-ն ընտրություններից դժգոհության մի ապացույց են ճանաչում՝ փողոցային պայքարը: ՔՊ առաջնորդը հեգնում ու հրահրում էր ընդդիմությանը՝ բա եթե ընտրությունները կեղծվել են, «ինչի՞ եք վեր ընգել ձեր տներում, ինչի՞ փողոցում չեք»: Իսկ առողջապահության նախարար տիկինը Հանրապետության հրապարակից լայվ է մտնում ու ծաղրում, թե՝ փորձեցի ընդդիմադիրներին գտնել, չհաջողվեց: Իհարկե, ընտրությունների արդյունքներից դժգոհության ձեւերից մեկը նաեւ փողոց դուրս գալն է՝ հանրահավաքային պայքարով հանրային բողոք հայտնելը: Բայց հենց ինքը՝ Նիկոլ Փաշինյանը, այնպես է վարկաբեկել փողոցային պայքարը, իր գործունեությամբ ապացուցել, որ փողոցից եկած իշխանությունն ավելի վատն է, քան տարեցտարի վերարտադրվողը, այնքան է կոտրել հավատը փողոց փակելու ու հանրահավաքներ անելու գործիքակազմի նկատմամբ, որ զարմանալի չէ հանրության այս պասիվությունը: Բայց դժգոհության այլ եղանակներ էլ կան: Օրինակ, 2017 թվականի խորհրդարանական ընտրություններում ՀՀԿ-ն 740 հազար ձայն էր ստացել՝ ավելի շատ, քան այսօր ՔՊ-ն, մարդիկ անասելի դժգոհ էին, բայց միայն մեկ տարի անց դուրս եկան փողոց: Ավելին՝ 2017-ին ընտրությունների արդյունքներից դժգոհ չէին անգամ Նիկոլ Փաշինյանն ու նրա «Ելք» դաշինքը, որոնք 8 տոկոս ձայն ստացան ու դարձան ԱԺ ամենափոքր խմբակցությունը: Եվ չնայած մշտապես խոսում է այդ ընտրությունների կեղծված լինելու մասին, անգամ Սահմանադրական դատարան չդիմեցին: Իսկ այսօր՝ ընտրություններին մասնակցած 18 ուժից 7-ը դիմել է ՍԴ, եւ դա է արդյունքներից դժգոհ լինելու, դրանց կեղծված լինելու գլխավոր ցուցիչը: Ինչ վերաբերում է ընտրություններին, ապա մեր 40-ամյա պատմության մեջ չէր եղել դեպք, որ մի ամբողջ ուժի ապօրինաբար դուրս թողնեին խորհրդարանից:

Նոր խորհրդարանը դեռ չի ձեւավորվել, բայց ՔՊ-ում ԱԺ նախագահ են ընտրում: Ինչպեսեւ նախորդ անգամ, դա կանեն ՔՊ վարչությունում, ապա կներկայացնեն ԱԺ խմբակցությանը: Առաջադրումների փուլն արդեն սկսվել է: Այս պահի դրությամբ 3 թեկնածու է առաջադրվել՝ Ալեն Սիմոնյանը, Ռուբեն Ռուբինյանը եւ Հայկ Կոնջորյանը: Չնայած Լիլիթ Մակունցի թեկնածությունն էլ էին նախընտրական շրջանում դիտարկում, սակայն նա չի ինքնառաջադրվել, որեւէ մեկն էլ նրան չի առաջադրել: ՔՊ-ում խոսում են, որ Փաշինյանի նախընտրական հռետորաբանությունն ու նոր խորհրդարանի կազմը հաշվի առնելով, Մակունցի թեկնածությունը կորցրել է ակտուալությունը, քանի որ մեղմ, կոռեկտ, քաղաքականապես ոչ այնքան թրծված տիկինն ակնհայտորեն չի ձգի այդ պաշտոնում: Վարչությունն ընտրություն կկատարի վերը նշված 3 թեկնածուի միջեւ: Մեր աղբյուրները պնդում են՝ Ալեն Սիմոնյանը վստահ է, որ Փաշինյանն իրեն է տեսնում այդ պոստում, եւ այդ մասին նաեւ ասում է իր շրջապատում:

«ՀՐԱՊԱՐԱԿԸ» ՀԱՂԹԵԼ Է ՎԵՐԱՔՆՆԻՉՈՒՄ

2025թ. մարտի 29-ի «Պապիկյանի ազաբբաշին վերահսկում է զինվորականներին» մեր հրապարակումը շատ էր զայրացրել հրապարակման հերոսին՝ Սուրեն Պապիկյանի ընկերոջը եւ օգնականին՝ Արմեն Ղալեչյանին: Թեեւ մենք ընդամենը գրել էինք, որ նա վերահսկողություն է իրականացրել զինվորականների ատեստացիայի նկատմամբ՝ չունենալով դրա իրավունքն ու փորձառությունը: Ղալեչյանը, որը դրանից առաջ Երեւանի ավագանու ՔՊ-ական անդամ է եղել, մեր հրապարակումից հետո դիմեց դատարան՝ պահանջելով 1 միլիոն դրամ փոխհատուցում, հերքում եւ այլն: Հայցվորն այնքան վստահ էր հաղթանակի մեջ, որ անգամ դատարան չէին բարեհաճում գալ՝ ոչ ինքը, ոչ ներկայացուցիչը: Իսկապես՝ առաջին ատյանի դատարանը հօգուտ հայցվորի վճիռ կայացրեց՝ մեզ պարտավորեցնելով հերքում հրապարակել եւ մասնակի փոխհատուցում վճարել: Մենք դիմեցինք Վերաքննիչ դատարան եւ երեկ ուրախությամբ տեղեկացանք, որ վերաքննիչը՝ Իվան Բաղմանյանի նախագահությամբ, ամբողջությամբ բեկանել է առաջին ատյանի վճիռը եւ հօգուտ «Հրապարակի» որոշում կայացրել՝ արձանագրելով, որ առաջին ատյանի դատարանը սխալվել է՝ մեր հրապարակման մեջ չկա զրպարտության եւ վիրավորանքի որեւէ նշույլ: Մեր շահերը բարեխղճորեն եւ պրոֆեսիոնալ պատասխանատվությամբ դատարանում ներկայացնում էր փաստաբան Միքայել Ահարոնյանը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՄՆԱՑԵԼ ԵՆ ՈՒԺԱՅԻՆ ԵՎ ՎԱԽԻ ԼՈՃԱԿՆԵՐԸ

Նիկոլ Փաշինյանը, անդրադառնալով ՀՀ Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի եւ Ադրբեջանի նախագահի արտաքին հարաբերությունների գծով խորհրդական Հիքմեթ Հաջիեւի դիլիջանյան հանդիպմանը, ասել է. «Սա նշանակում է, որ խաղաղության գործընթացի ուղղությամբ մենք գնում ենք առաջ եւ կառավարում ենք այն ռիսկերը, որոնք կարող էին առաջանալ... Ես եմ Արմեն Գրիգորյանին հանձնարարել, որպեսզի Ադրբեջանի իր գործընկերոջ հետ քննարկի՝ կամ արդյոք հանդիպման անհրաժեշտություն, թե՝ ոչ: Մենք զբաղված ենք իրադրության կառավարմամբ»: Ըստ էության, ակնարկել է, որ այս հանդիպումներով պատերազմի ռիսկն են նվազեցնում: Հիշեցնենք, որ Արմեն Գրիգորյանը եւ Հիքմեթ Հաջիեւը հանդիպել էին հունիսի 14-ին, անգամ զբոսնել Դիլիջանում: Հանդիպման վերաբերյալ տարածված հաղորդագրությամբ ասված էր, որ քննարկվել են ադրբեջանա-հայաստանյան խաղաղության օրակարգին վերաբերող հարցեր, եւ ընդգծվել է երկկողմ ուղիղ երկխոսության շարունակման կարեւորությունը: «Հրապարակը» զրուցել է ադրբեջանագետ **Անժելա Էլիբեգովայի** հետ:

- Նիկոլ Փաշինյանը հերթական անգամ ակնարկում է, որ իրենք կանխում են պատերազմի վտանգը, ռիսկերը, այս անգամ՝ Հաջիեւ-Գրիգորյան հանդիպմամբ: Բայց նույն Փաշինյանը նաեւ պարբերաբար հայտարարում է, որ խաղաղության դարաշրջան է Հայաստանը մտել, որ Արցախը հանձնելով, այն ուրանալով, անգամ Հայոց ցեղասպանությունը կասկածի տակ դնելով, ինքը վերջապես խաղաղություն է հաստատել տարածաշրջանում, սակայն ստացվում է, որ պատերազմի ռիսկերը դեռ կան, եւ դրանք չեզոքացնելու անհրաժեշտությունն էլ կա: Արդյունքում ստացվում է, որ Ադրբեջանը չի բավարարվել Արցախը գրավելով եւ հիմա հավակնություններ ունի նաեւ ՀՀ սուվերեն տարածքների նկատմամբ:

- Նախ պետք է մի շատ կարեւոր հանգամանքի վրա ուշադրություն դարձնել՝ որ երկրի բարձրաստիճան պաշտոնյան Հայաստան այցելեց ընտրություններից անմիջապես հետո: Խոսքն Ադրբեջանի նախագահի աշխատակազմի բարձրաստիճան պաշտոնյայի այցի մասին է: Սա առաջին կարեւոր բանն է, որի վրա պետք է հանրությունն ուշադրություն դարձնի: Հաջիեւը Հայաստան էր եկել իրավիճակն ու իրադրությունը ճշտելու: Ադրբեջանական պաշտոնական խոսույթից, ԶԼՄ-ների հրապարակումներից ակնհայտ է դառնում, որ Ադրբեջանը դժգոհ է Հայաստանի ընտրությունների արդյունքներից:

- Ինչո՞ւ է դժգոհ:

- Նիկոլ Փաշինյանն իրենց խոստացել էր, որ կունենա սահմանադրական մեծամասնություն, սակայն նրա հաշվարկները ճիշտ դուրս չեկան, արդյունքում սահմանադրական հանրաքվե իրականացնելու հարցը բարդանում է, Նիկոլ Փաշինյանը 50+1 ձայն այդպես էլ չկարողացավ ստանալ, արդյունքում՝ Ալիեւին տված նրա խոստումներն այս պահին իրականանալի չեն: Նիկոլ Փաշինյանին ուղղված այժմ բազմաթիվ հարցեր կան Ադրբեջանի կողմից. եթե նա չի կարողացել այսքան կեղծիքների ու վարչական ռեսուրսների կիրառմամբ հասնել տեսանելի արդյունքների, ապա բարդանում են հետագա քայլերը: Որպեսզի հետագա քայլերը չբարդանան, նա փորձելու է գլխատել ընդդիմության ակտիվ զանգվածին եւ առաջնորդներին: Նա հանրային ազդեցություն ունեցող բոլոր ուժերին իզոլացնելու է, տարբեր խափանման միջոցներով մեկին կալանքի տանելով, մյուսին տնային կալանք տալով, այն մյուսին զրկելով հանրային ակտիվության իրավունքից, եւ այսպես շարունակ: Նա փորձելու է հասարակության վրա միանձնյա ազդեցություն ունենալ իր եւ Ադրբեջանի քարոզչական թեզերը տարածելու հարցում, այն է՝ եթե Սահմանադրությունը չփոխվի, պատերազմ տեղի կունենա: Հիմա մենք հենց այդ փուլում ենք:

- Այսինքն՝ հերթական անգամ կարող ենք արձանագրել, որ խաղաղության օրակարգը որքան էլ շատերի համար ցանկալի, ամբողջապես կեղծ օրակարգ է:

- Այդ օրակարգը բացարձակ կեղծ էր առաջին իսկ րոպեից: Ոչ մի գրագետ մարդ չի կարող հավատալ խաղաղության պատրանքին, անգամ Նիկոլ Փաշինյանի աջակիցներից շատերը դրան չեն հավատում:

- Իշխանությունը Հաջիեւին ի՞նչ կարող էր խոստանալ՝ Սահմանադրությունը փոխելու փոխարեն:

- Ես այս պահին վստահ չեմ, որ Սահմանադրություն փոխելու հարցում վերջնականապես իշխանությունները ձախողվել են: Այն բոլոր գործընթացները, որոնք սկսել է այս պահին Նիկոլ Փաշինյանը, միտված են հենց այդ պրոցեսի իրականացմանը՝ ցանկացած գնով եւ ցանկացած պարագայում: Միանշանակ, այս պահին ոչինչ չենք կարող պնդել: Այո, այս պահին նա չունի 2/3, սակայն մենք չգիտենք, թե նա մինչեւ սեպտեմբեր ինչեր կարող է անել, եթե ընդդիմությունը միահամուռ կերպով այդ ամենին չդիմադրի: Նիկոլ Փաշինյանի առջեւ դրված է հստակ պահանջ՝ պետք է Սահմանադրությունը փոխվի: Ընտրություններից հետո նա հասկացավ, որ սահմանադրական հանրաքվե անցկացնելը բարդ է, քանի որ իշխանությունը չունի մեծամասնության աջակցությունը, հետեւապես, բարդ է այդ ճանապարհով գնալը: Արդյունքում միակ տարբերակը հանրային դիմադրությունը կոտրելն է:

- Անդադար պատերազմով սպառնալը չափազանց արհեստական է թվում: Տպավորություն է, թե Ալիեւն ու Փաշինյանը փորձում են հայ ժողովրդին պատերազմի սպառնալիքի ու վախի մեջ պահել, սակայն իրականում պատերազմի ռիսկերն այնքան էլ մեծ չեն: Ի վերջո, այդքան հեշտ գործընթաց է Հայաստանի վրա հարձակվելը:

- Խնդիրն այն է, որ մեր հասարակության համար «պատերազմ» բառը տրիգեր է: Մեր հանրությունը դեռ չի հաղթահարել 2020-ի, 2022-ի եւ 2023-ի սարսափելի իրավիճակները, եւ ամեն անգամ, երբ մարդկանց վախեցնում են, որ եթե խելոք չմնաք, նոր պատերազմ տեղի կունենա, մարդիկ հոգեբանորեն շատ են ճնշվում, իսկ դա հրաշալի հասկանում է թե Ալիեւը եւ թե Փաշինյանը: Նրանք զուգահեռաբար հայ ժողովրդին պատերազմի սարսափի մեջ են պահում: Իրավիճակը փորձում են անելանելիության հասցնել եւ հայտարարում են, որ եթե Ադրբեջանի պահանջները չկատարենք, պատերազմ տեղի կունենա: Արդեն քանի տարի է՝ նույն սցենարով Փաշինյանը գնում է զիջումների եւ արդարանում է՝ եթե չզիջեի, պատերազմ կլիներ:

- Այսինքն՝ հայ հասարակությանը հոգեբանական գրոհի են ենթարկում:

- Պատերազմի ռիսկը փոքր չէ այնքան ժամանակ, քանի դեռ մենք գտնվում ենք այնպիսի իրավիճակում, երբ օրվա իշխանությունը որեւիցե դիմադրություն չի ցուցաբերում եւ անգամ չի փորձում զոհի կերպարից հանել հասարակությանը: Այնուամենայնիվ, հենց այս ընտրությունների արդյունքները ցույց տվեցին, որ հասարակության մեծամասնությունը համաձայն չէ Նիկոլ Փաշինյանի վարած քաղաքականության հետ: Նիկոլ Փաշինյանն ունի երկու լծակ՝ ընդդիմությանն ամեն կերպ ռեպրեսիաների ենթարկել, ապա հասարակությանը պատերազմով սարսափի մեջ պահել: Մնացել է ուժային լծակը եւ վախի լծակը, իշխանությունը չունի կոմունիկացվելու որեւէ այլ վտանգ:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ ԴԱՏՎՈՒՄ ԵՆ ԹՄՐԱՆՅՈՒԹ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Վերջին տարիներին Հայաստանում թմրամոլությունն աննախադեպ տարածում է ստացել: Այն մտել է նույնիսկ բանակ: Ահավասիկ՝ պաշտոնապես արձանագրված մի դեպք. պայմանագրային զինծառայող Սերգեյ Զուրաբյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2025 թ. մայիսի 13-ին, ժամը 21:00-ի սահմաններում զինվորական ծառայությունը կրելու այլ վայր հանդիսացող՝ Այգի կոչվող կապի հանգույցում պայմանագրային զինծառայող Էդմոն Մարգարյանին հյուրասիրելու եղանակով ապօրինի իրացրել է կաննաբինոիդների խմբին պատկանող թմրալկալոիդներ պարունակող թմրամիջոց: Զուրաբյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով («Առանց իրացնելու նպատակի զգալի չափերով թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) կամ դրանց ածանցյալ կամ պրեկուրսոր ապօրինի արտադրելը, պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, տեղափոխելը կամ առաքելը, որը կատարվել է խոշոր չափերով») եւ ՀՀ քրեական օրենսգրքի 531-րդ հոդվածի 2-րդ մասով («Զինծառայողի կողմից զորամասում, զինվորական ծառայությունը կրելու այլ վայրում կամ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու ընթացքում թմրամիջոց կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) կամ դրանց ածանցյալ ապօրինի գործածելը կամ դրանք գործածած վիճակում ծառայության ներկայանալը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից»): Մարգարյանին մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 531-րդ հոդվածի 2-րդ մասով: Նրանց նկատմամբ խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը:

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում Ս. Զուրաբյանը եւ Է. Մարգարյանը միջնորդել են, որ արագացված վարույթ կիրառվի: Ասել են, որ համաձայն են առաջադրված մեղադրանքների հետ, իրենց լիովին մեղավոր են ճանաչել: Հայտնել են նաեւ, որ մինչեւ միջնորդությունները ներկայացնելը խորհրդակցել են իրենց պաշտպանների հետ եւ գիտակցում են արագացված վարույթ կիրառելու հետեւանքները: Դատարանը բավարարել է մեղադրյալների միջնորդությունը: 2026 թ. հունվարի 12-ին Իջեւանում Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Սասուն Մխիթարյանը վճռել է Սերգեյ Զուրաբյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 531-րդ հոդվածի 2-րդ մասով եւ ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված հանցագործությունների կատարման, 531-րդ հոդվածի 2-րդ մասով որպես պատիժ նշանակել կարճաժամկետ ազատազրկում՝ 1 ամիս ժամկետով, եւ Քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածով նախատեսված կարգով 1 ամիս ժամկետով կարճաժամկետ ազատազրկումը համապատասխանեցնել 1 ամիս ժամկետով ազատազրկմանը: Քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով պատիժ նշանակել ազատազրկում՝ 4 տարի ժամկետով: Հանցագործությունների համակցությամբ, նշանակված պատիժները լրիվ գումարելու միջոցով՝ վերջնական պատիժ սահմանել ազատազրկում՝ 4 տարի 1 ամիս ժամկետով: Քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի կիրառմամբ՝ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան 4 տարի ժամկետով: Էդմոն Մարգարյանին նույնպես մեղավոր են ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 531-րդ հոդվածի 2-րդ մասով եւ պատիժ են նշանակել կարճաժամկետ ազատազրկում՝ 1 ամիս ժամկետով, որը պայմանականորեն չեն կիրառել՝ սահմանելով փորձաշրջան 1 տարի ժամկետով: Հանրային մեղադրող Է. Աղաբալյանն այդ դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել, որով խնդրել է Սերգեյ Զուրաբյանի եւ Էդմոն Մարգարյանի նկատմամբ նշանակված պատիժները պայմանականորեն չկիրառելու մասով բեկանել Տավուշի մարզի դատարանի 2026թ. հունվարի 12-ի դատավճիռը: Գործն այժմ քննվում է վերաքննիչ դատարանում, վերջին նիստը կայացել է մայիսի 4-ին:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՏՈՒՐՍ

ՓԱՇԻՆՅԱՆԻՆ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԿՈԱԼԻՑԻԱ է ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ

Խորհրդարանական ընտրությունները կեղծելու մեջ Նիկոլ Փաշինյանին մեղադրող «Ուժեղ Հայաստանի» առաջնորդ Սամվել Կարապետյանը հայտարարում է ընդդիմադիր ուժերի համախմբման գործընթացի եւ փողոցային պայքարը «ճիշտ պահին գեներացնելու» մասին. «Քանի որ մենք այդ սխալը թույլ տվեցինք ընտրություններից առաջ, շատ ընդդիմադիր ուժեր, որոնք միգուցե ազնիվ պայքարում էին, բայց գերագնահատեցին իրենց ուժերը, շատ ընդդիմադիր ուժերի հետ մենք չկարողացանք պայմանավորվել»: Կարապետյանի խոսքով՝ համախմբումը հիմա շատ կարեւոր է երկրի եւ ժողովրդի համար: «Առաջարկում եմ՝ ստեղծենք համակարգող խորհուրդ, ուղիղ եթերում շփվենք, բոլոր պրոբլեմները մեր ժողովրդին բացահայտենք, ճիշտ քննարկումներով դիմենք մեր ժողովրդին եւ հասկանալով՝ որն է ճիշտ, գնանք այդ քայլերով»: Խորհրդի օրակարգի վերաբերյալ էլ է որոշ փակագծեր բացել. «Առաջին հարցը Փաշինյանի հեռացումն է: Այն ընդդիմադիր ուժը, որի համար թանկ է մեր երկիրը, կարձագանքեն, եւ մենք անպայման կստեղծենք հետընտրական ընդդիմադիր կոալիցիա»:

Երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի առաջնորդած «Հայաստան» դաշինքը ողջունում է «Ուժեղ Հայաստանի» կողմից համագործակցության առաջարկը: Դաշնակցության ԳՄ ներկայացուցիչ **Իշխան Սաղաթելյանի** համոզմամբ՝ համագործակցության նոր ֆորմատը հնարավորություն կտա ընդդիմադիր ուժերին՝ հետընտրական շրջանում մի շարք օրակարգային հարցերի շուրջ համագործակցել: Թե ինչ ձեւաչափ կընտրվի՝ կլինի ընդդիմադիր կոալիցիա, թե՝ կոմիտե, Սաղաթելյանի խոսքով, պարզ կդառնա քննարկումների ընթացքում: Նախնական քննարկումներն այդ հարցերի պատասխանը դեռեւս չեն տվել: Կարեւորը, ըստ ԳՄ ներկայացուցչի, այն է, որ համագործակցության նոր ֆորմատը հնարավորություն կտա ընդդիմադիր ուժերին՝ հետընտրական շրջանում մի շարք օրակարգային հարցերի շուրջ համագործակցել: «Գլխավոր օրակարգն այն զիջումներն են, որ պատրաստվում է անել իշխանությունը, Հաջիեւի այցը դրանով է պայմանավորված, պատրաստվում են Ադրբեջանի պահանջով սահմանադրություն փոխել, այսպես կոչված՝ անկլավներ հանձնել»,- նշում է Սաղաթելյանը:

«Հայաստան» դաշինքի անդամը հավելում է նաեւ. «Դիմելու ենք Սահմանադրական դատարան (զրույցը մինչեւ ՍԴ դիմելն է կայացել), բավական հիմնավոր փաթեթներ են ներկայացվելու, ընտրությունների կեղծման վերաբերյալ կոնկրետ օրինակներով, փաստերով, եւ ՍԴ-ն երբ սկսի քննարկել այդ հայցերը՝ 5-6 ուժ հայտարարել է դիմելու մասին: Նաեւ քննարկում ենք հնարավորությունները՝ այդ ընթացքում բողոքի ակցիաներ անցկացնելու եւ մեր ձայնը տեղ հասցնելու իմաստով»: Հարցին՝ ակնկալում են, որ ՍԴ-ն անվավեր կճանաչի ընտրությունների արդյունքները եւ նոր ընտրություններ կնշանակի, Իշխան Սաղաթելյանը պատասխանեց. «Անշուշտ, մենք լավ հասկանում ենք, որ ՍԴ-ն ՔՊ-ի կողմից ձեւավորված դատարան է, բայց առնվազն մենք այդ շանսը տալիս ենք դատարանին, որ ինքը կարողանա ապացուցել՝ ծառայում է Հայաստանին եւ Սահմանադրությանը, այլ ոչ թե կոնկրետ Նիկոլ Փաշինյանին: Թող ընտրի, թե որ ճանապարհով է գնում, ըստ այդմ՝ մենք կընդունենք մեր հետագա որոշումները»:

Ընտրությունների անցողիկ շեմը չհաղթահարած «Լուսավոր Հայաստան»-ում «Ուժեղ Հայաստանի» առաջնորդի առաջարկը դեռ չեն քննարկել: «Մենք չենք քննարկել, հետեւաբար՝ ձեռնպահ կմնամ իմ կարծիքն առանձին հայտնել. երբ խորհուրդը կքննարկի, մեր դիրքորոշումը կհայտնենք»,- մեզ ասաց կուսակցության առաջնորդ **Էդմոն Մարուքյանը**:

Իսկ «Հայոց համազգային միասնություն» կուսակցության նախագահ, ԴՖԱՀԿ նախկին ղեկավար Միհրան Պողոսյանը երեկ շտապեց հայտարարել, որ միանում է «Ուժեղ Հայաստանի» առաջնորդ Սամվել Կարապետյանի՝ բոլոր ընդդիմադիր ուժերի համախմբման կոչին: ««Հայոց համազգային միասնություն» կուսակցությունը, կարեւորելով ազգային միասնությունն ու համատեղ պայքարը հանուն Հայաստանի եւ հայկականության, միանում է «Ուժեղ Հայաստան» դաշինքի առաջնորդ Սամվել Կարապետյանի՝ բոլոր ընդդիմադիր ուժերի համախմբման կոչին: Մենք ողջունում եւ աջակցում ենք հետընտրական ընդդիմադիր կոալիցիայի ձեւավորման գործընթացը՝ համոզված լինելով, որ միայն միասնական ջանքերով է հնարավոր հաղթահարել երկրի առջեւ ծառացած մարտահրավերները եւ ապահովել Հայաստանի արժանապատիվ ապագան»,- գրված է կուսակցության հաղորդագրության մեջ: Կարապետյանի առաջարկը ողջունեցին նաեւ Հայաստանի դեմոկրատական կուսակցությունն ու «Միասին» շարժումը:

Հունիսի 14-ին, երբ ԿԸՀ-ն հրապարակեց ընտրությունների վերջնական արդյունքները, համաձայն որոնց՝ ԲՀԿ-ն չի անցնում խորհրդարան, 6 ընդդիմադիր ուժ՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքը, «Հայաստան» կուսակցությունների դաշինքը, «Բարգավաճ Հայաստանը», «Լուսավոր Հայաստանը», Հայ ազգային կոնգրեսը, Ազգային ժողովրդավարական բեւեռը, հայտարարություն տարածեցին՝ նշելով, որ չեն ճանաչում ընտրությունների արդյունքները: Հայտարարությանը, զարմանալիորեն, չմիացավ Արման Թաթոյանի գլխավորած «Միասնության թեւերը»: Մեր տեղեկություններով, այս հայտարարությունը կազմելիս է միավորման գաղափարը ծագել՝ ստեղծել հետընտրական խորհուրդ եւ համատեղ ճակատով գործողություններ իրականացնել: Իսկ թե որ ուժերը կմիանան Կարապետյանի առաջարկին, կախված է ստեղծվելիք խորհրդի գործունեության բնույթից, թե ինչ ֆորմատով է աշխատելու, ինչ օրակարգով եւ այլն:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱԼԻՔ է ԲԱՐՁՐԱՑՐԵԼ

«Հրապարակի» զրուցակիցը ՄԻԵԴ-ում հայ ռազմագերիների ներկայացուցիչ, իրավապաշտպան **Սիրանուշ Սահակյանն** է:

- Հայաստանում տեղի ունեցած ընտրություններից հետո Ալիեւի խորհրդական Հիքմեթ Հաջիեւն այցելեց Հայաստան, սակայն հայ ռազմագերիների ճակատագիրն անհայտ է: Ռազմագերիների հարցով որեւէ տեղաշարժ կա՞:

- Մենք դրական տեղաշարժերի մասով չունենք դրական արձանագրում, այս պահին նրանք միայն որոշ իրավունքներից են օգտվում, օրինակ՝ ընտանիքի անդամների հետ հեռախոսազանգեր են ունենում: Եվ կան ահազանգեր, որ ռազմագերիներից շատերի առողջական վիճակը գնալով ավելի է վատթարանում, ինչպես նաեւ՝ նրանց մոտ դիտարկում ենք հոգեբանական վիճակի անկում: Անորոշությունը խիստ բացասաբար է անդրադառնում այնտեղ գտնվող հայերի ֆիզիկական, ինչպես նաեւ՝ հոգեբանական առողջության վրա: Տեղաշարժեր չկան նաեւ նրանց՝ արտաքին աշխարհի հետ կապերը վերականգնելու առումով: Կան մի քանի նախաձեռնություններ այժմ, որոնցից մեկը պարոն Ռուբեն Վարդանյանի կնոջ նախաձեռնությունն է, որն իրավապաշտպանական նախաձեռնություն է եւ խիստ մարդասիրական բնույթ ունի՝ օտարերկրյա կին իրավապաշտպանների ներգրավմամբ: Նախաձեռնությունը խնդրանք-պահանջով է հանդես եկել՝ ուղղված Ադրբեջանի մարդու իրավունքների պաշտպանին, որպեսզի կարճատեւ այցելության հնարավորություն տրվի՝ անձնական իրերի, նամակների փոխանցման համար: Մենք հետեւում ենք, թե ինչ արձագանք կտա Ադրբեջանի իշխանությունը, ի դեպ, նաեւ հետեւում ենք ադրբեջանական հանրային արձագանքներին, ուսումնասիրել ենք դրանք, եւ կարող եմ ասել, որ դրանք, մեղմ ասած, դրական չէին, ադրբեջանցիները, մարդասիրական հարցերին անդրադառնալու փոխարեն, հայերի նկատմամբ բացառապես ատելություն են գեներացնում, ինչը ցույց է տալիս, թե ինչպիսին են Ադրբեջանի հասարակական տրամադրությունները: Ըստ էության, նրանց տրամադրություններում ոչինչ չի փոխվել: Ինչ վերաբերում է գերիների ընտանիքներին, ապա մենք նրանց հետ կապի մեջ ենք, տարբեր նախաձեռնությունների վրա ենք աշխատում, սակայն դրանց մասին խոսելու հնարավորություն կունենամ ավելի ուշ: Ամեն դեպքում, մենք գործում ենք բաց եւ եթե դիմենք որեւէ կառույցի, ընտրելու ենք բաց նամակի ձեւաչափը, ուստի մեր քայլերին ծանոթանալու հնարավորություն կունենան բոլորը: Վերահաստատեմ՝ վերաքննիչ դատարանի գործընթացներին հետեւում ենք, զուգահեռաբար նախապատրաստական քայլեր ենք իրականացնում, որպեսզի շինծու դատավարությունների ընթացքում տեղ գտած խախտումները եւ ապօրինի դատավճիռների հարցերը բարձրաձայնվեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանում: Հինգշաբթի օրվա վճիռն էլ մեզ ցույց տվեց, որ գուցե ուշացած, բայց հնարավոր է հասնել արդարության Եվրոպական դատարանի եւ միջազգային ատյանների միջոցով:

- Քանի որ Հայաստանի իշխանությունները հրաժարվել են Ադրբեջանի դեմ ուղղված բոլոր միջազգային հայցերից, ի՞նչ կարծիքի եք հինգշաբթի օրը հրապարակված դատավճռի եւ հայկական կողմի հաղթանակի մասին:

- Այդ վճիռը կայացվել է անհատական գանգատի հիման վրա, դիմումատուները եղել են Հայկ Թորոյանի ծնողները, այլ ոչ թե պետությունը, այդ թվում՝ Թորոյանի քույրը, ինչպես նաեւ՝ վեց հոգանոց փաստաբանական թիմ է ներգրավված եղել պրոցեսում, այդ թվում՝ ես: Դատարանի քննարկման ներքո են գտնվում 2016 թ. պատերազմի ժամանակ նաեւ այլ անձանց դեմ կատարված հանցագործությունները, Հայկ Թորոյանի գլխատման դեպքը միակը չէ: Եղել են նաեւ խոշտանգման դեպքեր՝ տարբեր քաղաքացիական անձանց մասնակցությամբ, տարեցների եւ այլն: Դրանք նույնպես կատարվել են պատերազմի ժամանակ եւ պատերազմական հանցագործություններ են համարվում, դիերի նկատմամբ անդամախեղումների դեպքեր եւս եղել են, եւ այդ բոլորը փաստագրվել եւ ներկայացվել է ՄԻԵԴ: Սպասում ենք նոր դատական ակտերի, որտեղ հայ տուժողները կրկին դրական արդյունքների կհասնեն: Անհատական գործեր կան՝ նաեւ 44-օրյա պատերազմի հետ կապված: Հարյուրավոր գործեր վերաբերում են պատերազմական հանցագործություններին: Մեծաթիվ գործեր կան, որոնք առնչվում են բռնի տեղահանությանը եւ միջազգային կոնվենցիաներով հաստատված վերադարձի իրավունքին: Միջպետական գանգատներից հրաժարումը չի կարող հանգեցնել անհատական գործերի քննության դադարեցման: Մենք որեւէ դատական պրոցեսից չենք պատրաստվում հրաժարվել: Արդարությունը վերականգնելու մեր ջանքերը շարունակական են լինելու:

- Նշեցիք, որ հայ ռազմագերիներն առողջական լուրջ խնդիրներ ունեն: Ո՞ւմ մասին է խոսքը:

- Մանրամասներ չեմ կարող ասել, կան մարդիկ, ովքեր ունեն լուրջ խնդիրներ՝ կապված թոքերի, այլ կենսական օրգանների հետ: Պատշաճ բուժօգնություն չի կազմակերպվում, ուստի նման պայմաններում հիվանդությունները սրվում են, բարդանում, անգամ նրանց ձայնից է դա նկատելի:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆՆ ՈՒՆԻ ՄԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՄԱԽՄԲԵԼ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ

*«Հրապարակի» զրուցակիցն «Ուժեղ Հայաստան» դաշինքի պատգամավորության թեկնածու **Էդգար Ղազարյանն** է:*

- Թվում էր՝ հետընտրական կրքերը հանդարտվել են, եւ փաշինյանական վերարտադրված ռեժիմը որոշակի դադար կտա, ու ընդդիմախոսների, հատկապես «Ուժեղ Հայաստանի» դեմ քաղաքական հալածանքներն ու շինծու քրեական հետապնդումները կդադարեցվեն: Բայց հետապնդումները շարունակվում են. նոր մարդիկ են ձերբակալվում, Դավիթ Ղազինյանն էլ կալանավորվեց, պատգամավորության թեկնածու Աշոտ Եղիազարյանը: Այս ամենի ֆոնին Փաշինյանը կրկին «բոցաշունչ» ելույթ է ունեցել՝ դարձյալ սպառնալով ընդդիմադիր ուժերին ու ձեր թիմին: Ղազինյանի կալանավորումն ինչ կտա իշխանություններին:

- Ակնհայտ է, որ Դավիթ Ղազինյանի հետ տեղի ունեցող զարգացումները ոչ մի աղերս չունեն իրավական գործընթացների հետ, դա հերթական դասական քաղաքական հետապնդումն է, որն իրականացվում է «Ուժեղ Հայաստան» կուսակցության առաջնորդի, պատգամավորության թեկնածուների, վստահված անձանց համակիրների եւ աջակիցների նկատմամբ: Դավիթ Ղազինյանին ձերբակալելու մասին խոսակցությունները դեռ սկսվել էին ընտրությունների օրը: Ես առավել քան վստահ եմ, որ պարոն Ղազինյանը, լինելով պատվարժան ընտանիքի զավակ, օրինավոր մարդ, ոչ մի հանցանք չի գործել առավել եւս՝ իրեն վերագրվող շինծու մեղադրանքը, որի համար որեւէ հիմք գոյություն չունի: Նախընտրական շրջանից սկսած, արդեն հարյուրներով են չափվում այն քրեական գործերը, որոնք վերաբերում են «Ուժեղ Հայաստանի» թիմակիցներին, այդ թվում՝ բազմաթիվ պատգամավորության թեկնածուների: Կանցնի ժամանակ, եւ բոլորը կհամոզվեն, որ «Ուժեղ Հայաստանի» անդամներին մեղսագրվող մեղադրանքները սին են եւ քաղաքական հետապնդումներից բացի, ուրիշ ոչ մի իմաստ ու բովանդակություն չունեն: Սամվել Կարապետյանն ինքը հայտարարել է, որ իր թիմակիցներից ոչ ոք ընտրակաշառք ոչ մեկին չի առաջարկել, նման խնդիր մեզ հետ կապ ունենալ չի կարող: Անգամ հայտարարել է, որ նման բան անողը «նիկոլ է»՝ ակնհայտ վիրավորական իմաստով բնութագրելով ենթադրյալ նման քայլ անողին՝ վստահ լինելով, որ դա իր թիմակիցների հետ կապ չունի: Դավիթ Ղազինյանն ամուր խառնվածքով եւ դժվարություններ հաղթահարելու ունակ մարդ է: Ես վստահ եմ, որ նա պատվով կտանի այդ փորձությունը եւ մեկ օր շուտ կվերադառնա մեր պայքարի շարքերը, որտեղ ինքն ունի առանցքային դերակատարում:

- Մինչ հետընտրական փուլում մասնակից, հատկապես ընտրական շեմն անցած ուժերից ժողովուրդն ակնկալում է հստակ դիրքորոշում՝ հետագա պայքարի, մանդատ վերցնել-չվերցնելու եւ այլնի հետ կապված, Սամվել Կարապետյանը հայտարարել է ընդդիմադիր ուժերի միավորման մեկնարկի մասին: Նրա խոսքով՝ ընտրություններից առաջ ընդդիմությունը սխալ է թույլ տվել. շատ կուսակցություններ գերագնահատել են իրենց հնարավորությունները, իսկ նախապես միմյանց հետ պայմանավորվել չի հաջողվել: Նա առաջարկում է ստեղծել համակարգող խորհուրդ եւ հրապարակայնորեն քննարկել հետագա քայլերը: Որքանով էֆեկտիվ կլինի այս նախաձեռնությունը, եւ որչափ ժողովուրդը ողջամիտ կհամարի պայքարի այս մեթոդը:

- Սամվել Կարապետյանն ունի մի պատմական առաքելություն՝ համախմբել մեր ժողովրդին, այդ թվում՝ քաղաքական ուժերին: «Ուժեղ Հայաստան» կուսակցության հիմնադրումից անմիջապես հետո բազմաթիվ ճանաչված հանրային եւ քաղաքական գործիչներ համալրեցին այդ կուսակցության շարքերը՝ միանալով Սամվել Կարապետյանի առաջնորդած թիմին: Այնուհետեւ, երբ որոշում կայացվեց՝ մասնակցել ընտրություններին, «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը քաղաքական դաշինք կազմեց «Նոր դարաշրջան» եւ «Միավորված հայեր» կուսակցությունների հետ: Ավելի ուշ «Ուժեղ Հայաստան» դաշինքը համագործակցության հուշագիր ստորագրեց «Ապրելու երկիր» կուսակցության հետ: «Ազատություն», «Ժառանգություն», «Կայունություն», ՀԺԱՄ կուսակցություններն անվերապահ աջակցություն հայտնեցին «Ուժեղ Հայաստան» դաշինքին: Այդպիսի դիրքորոշում հայտնեց նաեւ «Հայաքվե» քաղաքացիական միավորումը, ինչպես նաեւ՝ զոհված զինծառայողների ծնողներին միավորող ամենամեծ՝ «Որդիների կանչ» հասարակական կազմակերպությունը: Մի շարք առանցքային կուսակցություններ, որոնք չէին մասնակցում ընտրություններին, կոչ արեցին իրենց համակիրներին՝ քվեարկել ընդդիմադիր քաղաքական ուժերից որեւէ մեկի, այդ թվում՝ «Ուժեղ Հայաստան» դաշինքի օգտին: Արդյունքում «Ուժեղ Հայաստան» դաշինքը խորհրդարան անցած ամենամեծ քաղաքական ուժն է: Այժմ Սամվել Կարապետյանը ջանքեր է գործադրում՝ ընդդիմադիր դաշտի բոլոր ուժերին միավորելու, նաեւ արտախորհրդարանական դաշինք կազմելու համար՝ մեկտեղելու մեր ընդհանուր ջանքերը՝ Նիկոլ Փաշինյանին իշխանությունից հեռացնելու եւ պետության կործանարար աղետը կանխելու նպատակով: Այս դեպքում խոսքն ընդհանուր արժեքների եւ նպատակների վրա հիմնված համագործակցության մասին է, որի ձեւաչափը եւ իրականացման կարգավորումները կորոշեն այն ուժերը, որոնք կհամախմբվեն եւ հիմք կդնեն հետագա համագործակցության համար: Վստահ եմ, որ այն, ինչպես նախորդ դեպքերում, հաջողություն կունենա:

Արա ԱԼՈՅԱՆ

Համայնքապետարանի էջում՝ միայն մի մասնագետ

Մոտ երկուսուկես ամիս է՝ Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի ինտերնետային էջը դատարկ է: Նախկինում այդ էջում ներկայացված էին համայնքապետարանի աշխատակիցները՝ համայնքի ղեկավարից մինչեւ համայնքապետարանի հավաքարարներ, նրանց կոնտակտային տվյալները, լուսանկարները եւ այլն: Ինչն է պատճառը, որ համայնքապետարանի աշխատակազմի վերաբերյալ տվյալներն անհասանելի են դարձել: Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության եւ հողաշինության բաժնի գլխավոր մասնագետի ԺՊ Արսեն Սարգսյանի դեմ կոռուպցիոն բնույթի քրեական վարույթ է հարուցվել, նա կալանավորվել է, գտնվում է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում: Ըստ որոշ լուրերի, Արսեն Սարգսյանի վերաբերյալ տվյալները, նրա լուսանկարը համայնքապետարանի էջից չեն կարողացել տեխնիկապես հեռացնել՝ նրա տվյալների հետ համայնքապետարանի ամբողջ աշխատակազմի տվյալներն են ջնջվել: Մի քանի օր առաջ համայնքապետարանի աշխատակազմի դատարկ էջում հայտնվել է գրառում ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման եւ հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Արփինե Խաչատրյանի մասին՝ առանց նրա լուսանկարի: Հայտնի չէ, թե ինչու են համայնքապետարանի աշխատակազմից միայն նրա տվյալներն առկա համայնքապետարանի կայքում:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԵՐԸ

Զժ-ում Մրցակցության եւ սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի 2025 թ. կատարողականի քննարկման ժամանակ հարց բարձրացվեց, որը հուզում է Հայաստանի բնակչության, կարելի է ասել՝ կեսին: Ինչո՞ւ է «Յանդեքս» տաքսի ծառայությունը կամայական գներ սահմանում եւ, օրինակ, անձրեւի ժամանակ կարող է կրկնակի բարձրացնել ծառայության գինը: Մրցակցության եւ սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի նախագահ Գեղամ Գեւորգյանը փոխանակ գոնե համաձայներ, որ կա նման խնդիր, որն իրենք չեն կարողանում լուծել, բայց աշխատում են, արդարացրեց «Յանդեքսին», ինչպես կարդարացներ, ասենք, «Յանդեքսի» PR բաժնի մենեջերը: Ասաց, որ անձրեւի ժամանակ Ա-ից Բ կետ հասնելու համար վարորդն ավելի շատ ժամանակ է ծախսում: «Դրանից բացի, կա գործակից, որն առաջարկ-պահանջարկի հիման վրա է: Առավելագույն գործակիցը մենք սահմանափակել ենք եւ սարքել ենք 2 անգամ, եւ 2 անգամից ավելի գործակցի պարագայում «Յանդեքս» ընկերությունն ընդհանրապես գումար չի աշխատում, այսինքն՝ եթե նույնիսկ գինը բարձրացավ, ամբողջ գումարը մնում է տաքսու վարորդին»,- ասաց նա:

Երեւի Գեղամ Գեւորգյանը կյանքում «Յանդեքսից» չի օգտվել: Չի պատկերացնում, որ, օրինակ, 900 դրամանոց ճանապարհը կարող է արժենալ ոչ թե առավելագույնը 2 անգամ ավելի՝ 1800 դրամ, այլ՝ 2 հազար 200, նույնիսկ՝ 2 հազար 700 դրամ, եւ ոչ միայն անձրեւի ժամանակ, այլեւ ամեն օր՝ 16.30-18.30-ի սահմաններում: Երկրորդ. միթե հարգարժան պարոնը չի հասկանում, որ սպառողի համար միեւնույն է՝ հավելվածն է իրենից լրացուցիչ գումար քերում, թե՞ վարորդը: ՄՍԾՊՀ նախագահին տնտեսագետ **Հրայր Կամենդատյանն** առաջարկում է ինքնավնասում անել, քանի որ հենց իր թողտվությամբ է «Յանդեքսը» երկրում գերմոնոպոլիզացված դիրքում հայտնվել: Նա եւ իր ընկեր տնտեսագետները հաշվարկել են, որ «Յանդեքսը» Հայաստանից տասնյակ միլիոններով գումարներ է տանում: «Հանդիպել ենք վարորդների պաշտպանության կազմակերպությունների հետ, եւ նրանք՝ բոլորն էլ դժգոհ են: Բայց ով որ խոսում է «Յանդեքսի» դեմ, քրեական գործեր են հարուցում: Փաստացի, ՄՍԾՊՀ-ն օգնում է ռուսական կապիտալով գործող այս ընկերությանը, մյուս կողմից էլ ասում են՝ «ռսի սապոգ», «Պուտլեր» եւ այլն: Ամոթ է: Պետք չէ այդքան ստել»: Ելնելով սեփական փորձից՝ տնտեսագետը վստահեցնում է, որ ընկերության համակարգչային ծրագիրը հաճախ նույնպես ստում է: «Երբ վարորդը վարում է մեքենան, ցույց է տալիս, որ պահանջարկը շատ է, խցանումները մեծ են, բայց նստում ես ավտոմեքենա, ամբողջ ընթացքում կանաչ գծով գնում ես: Այս համակարգչային խորամանկությունները նշանակում են փող քերել, ոչ թե փող աշխատել»,- ասում է նա:

Օր-օրի վատանում է նաեւ «Յանդեքսի» կապը սպառողների հետ: Հազարավոր «կլիենտներ» ունեցող այս ընկերությունը փաստացի անհաղորդ է: Եթե քաղաքացին տարրական հարցով փորձում է դիմել ղեկավարությանը, օրինակ, երբ մոռացել է իրերը մեքենայում, ապա հույսը միայն վարորդի բարեխղճությունն է: «Մի օր ինձ թվաց՝ դրամապանակս թողել եմ տաքսու մեջ, որի համարն ունեի: Զանգեցի գրասենյակ, ասում եմ՝ էսինչ համարի տաքսու վարորդի հետ խոսեք, տեսեք՝ թողե՞լ եմ, թե՝ չէ, ասացին՝ մեյլով նամակ գրեք, մենք ոչ մի բան չենք խոստանում»,- մեզ պատմեց Երեւանի մի բնակիչ:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՊԵՍԱՄԻՑ

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ՄԵՐ ՕՐԵՐԻ ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻ

Ընդդիմության առաջնորդ Սամվել Կարապետյանն իր հարցազրույցում հայտարարեց, որ այս պահին նպատակահարմար չի համարում փողոցային պայքարի կազմակերպումը: Ըստ Կարապետյանի, իրենք մարդկանց փողոց հանելու կարողություն ունեն, սակայն այս պահին չեն տեսնում հաղթանակի հասնելու հնարավորություն, իսկ փողոց հանելը եւ արդյունքի չհասնելը համարում են գոլորշի բաց թողնել: Թեեւ նա բաց չասաց, թե որն է պատճառը, որ այս պահին չեն տեսնում հաղթանակի հնարավորություն, բայց հասկացրեց: Փաշինյանը, որին նա դիմում էր որպես Ադրբեջանի մարզպետ, այս պահին ունի ԱՄՆ-ի եւ ԵՄ-ի աջակցությունը, Թուրքիան եւ Ադրբեջանը եւս սատարում են իրենց դրածոյին: Ռուսաստանը պատրաստ չէ միջամտել Հայաստանի ներքաղաքական գործերին: Քանի դեռ Փաշինյանի իշխանությունն ունի արտաքին աջակցություն, քանի դեռ այդքան մեծ թվով երկրներ պաշտպանում են նրան, հայաստանյան ընդդիմությունը եւ հասարակությունը միայնակ անընդունակ են հասնել նրա իշխանազրկմանը:

Ինչպես սրանից մոտ 350 տարի առաջ Իսրայել Օրին էր արեւմտյան քրիստոնյա երկրների մայրաքաղաքներում եւ արքունիքներում համոզում, որ օգնեն աշխարհի առաջին քրիստոնյա երկրի՝ Հայաստանի ազատագրման գործին, այնպես էլ Սամվել Կարապետյանն է ասում, թե իրենք փորձելու են համոզել եվրոպական երկրներին, որ փաշինյանական իշխանությանն իրենց աջակցության արդյունքում կործանելու են աշխարհում առաջինը քրիստոնեություն ընդունած երկիրը՝ Հայաստանը: Արեւմտյան երկրները երեւի պետք է հասկանան, որ Հայաստանը պոկելով Ռուսաստանի ազդեցության գոտուց, միացնում են ոչ թե իրենց ազդեցության գոտուն, այլ դատապարտում են վերացման, իսկ Հայաստանի տարածքն անցնելու է Ադրբեջանին եւ Թուրքիային: Սամվել Կարապետյանը, որպես փորձառու մարդ, իհարկե, հասկանում է, որ ԱՄՆ-ն եւ ԵՄ երկրները, շատ մեղմ ասած, անտարբեր են Հայաստանի ճակատագրի նկատմամբ, եւ նրանց չի հետաքրքրում, թե առաջինը կամ երկրորդն ով է ընդունել քրիստոնեությունը, ավելին՝ նրանք շատ լավ հասկանում են, որ իրենց հովանավորյալ Փաշինյանի քաղաքականությունը հանգեցնելու է Հայաստանի ոչնչացմանը, բայց հավանական Արեւմուտքը շահագրգռված է դրանում, քանի որ վստահ է, որ մեծ Թուրանի կառուցումը ծառայելու է իրենց աշխարհաքաղաքական շահերին՝ ստեղծելու է Ռուսաստանը շրջանցող ճանապարհ՝ Ղազախստանի նավթն ու Թուրքմենստանի գազը Եվրոպա հասցնելու համար: Հայաստանն այս ճանապարհի կառուցման գործում օգտագործվում է որպես շինանյութ: Բայց Կարապետյանն իմաստ չի տեսնում Արեւմուտքին թշնամի ճանաչելու եւ պատերազմ բացում, իհարկե, երկրորդ ճակատ նրանք, այնուամենայնիվ, բացեցին՝ պատերազմելով Օսմանյան կայսրության դեմ, սակայն այդ պատերազմն ավարտվեց ռուսների պարտությամբ: Հիմա էլ Ռուսաստանը չի ցանկանում խառնվել Հայաստանի ներքին գործերին, քանի որ իրենք Ուկրաինայի տարածքում պատերազմում են հավաքական Արեւմուտքի դեմ եւ երկրորդ ռազմաճակատի բացում չեն ցանկանում:

Փաշինյանը, ունենալով արեւմտյան կողմնորոշում, հայտարարելու մեջ, առանց այդ էլ թշնամիների պակաս չկա:

Ինչպես Իսրայել Օրին ֆրանսիական, ավստրիական, գերմանական, իտալական արքունիքներում անպտուղ բանակցություններ վարելուց հետո ի վերջո հասկացավ, որ Հայաստանի ազատագրման գործին կարող է օգնել միայն Ռուսաստանը, այնպես էլ Սամվել Կարապետյանը, անշուշտ, գիտի, որ անկախ Հայաստանի գոյության մեջ շահագրգիռ կարող է լինել միայն Ռուսաստանը, այսօր՝ նաեւ Իրանը: 1703 թվականին, երբ Իսրայել Օրին ռուս ցար Պետրոս Մեծին համոզում էր օգնել Հայաստանի մելիքներին՝ կազմակերպել Հայաստանի ազատագրումը, ռուս ցարը նրան պատասխանել էր, որ պատրաստ է օգնություն տրամադրել, սակայն միայն հյուսիսային պատերազմի ավարտից հետո: Այդ ժամանակ Ռուսաստանը պատերազմում էր Շվեդիայի հետ: Ռուսներին պետք չէր երկրորդ ճակատի բացում, իհարկե, երկրորդ ճակատ նրանք, այնուամենայնիվ, բացեցին՝ պատերազմելով Օսմանյան կայսրության դեմ, սակայն այդ պատերազմն ավարտվեց ռուսների պարտությամբ: Հիմա էլ Ռուսաստանը չի ցանկանում խառնվել Հայաստանի ներքին գործերին, քանի որ իրենք Ուկրաինայի տարածքում պատերազմում են հավաքական Արեւմուտքի դեմ եւ երկրորդ ռազմաճակատի բացում չեն ցանկանում:

Փաշինյանը, ունենալով արեւմտյան կողմնորոշում, Հայաստանը դարձրել է Արեւմուտքի դաշնակից եւ Ռուսաստանի թշնամի, չնայած Հայաստանի տարածքում ակտիվ ռազմական գործողություններ չեն ընթանում, ինչպես որ չեն ընթանում եվրոպական երկրների տարածքում: Բայց ինչպես պատերազմի մասնակից շատ երկրների, այնպես էլ Հայաստանի ճակատագիրը կախված է այդ պատերազմի արդյունքներից: Ռուսաստանը, Հայաստանում պահպանելով ռազմական ներկայություն, թույլ չի տալիս, որ Հայաստանը գոնե ֆորմալ իմաստով դառնա թուրքական ազդեցության տարածք, սակայն եթե պատերազմում պարտվի, ապա ռուսական զորքերն անմիջապես կհեռանան Հայաստանի տարածքից, եւ դրանց կփոխարինեն թուրք-ադրբեջանական զորամիավորումները, որպես հաղթող կողմի ներկայացուցիչներ: Եթե Ռուսաստանը հաղթի, Հայաստանը կվերադառնա ռուսական ազդեցության գոտի: Մինչեւ մեծ պատերազմի ավարտը Հայաստանի ընդդիմության եւ հասարակության խնդիրն է՝ դիմադրել երկրի ադրբեջանականացմանը եւ թուրքացմանը՝ թույլ չտալով, որ երկիրը վերջնականապես դառնա նրանց բոստանը:

ՀԳ. *Ի դեպ, Իսրայել Օրին մշտապես ունեցել է հայ կաթողիկոսների աջակցությունը, որոնք եղել են Հայաստանը թուրքական եւ պարսկական լծից ազատագրման պայքարի առաջամարտիկները:*

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՀԵՌԱՑՈՂ ՆԻԿՈԼԸ ՄԵԶ ԱՊԱԳԱ ՉԷ

Հուշեք ինձ, խնդրեմ, թե որն է օրվա ամենակարեւոր թեման՝ գյուղմթերքի արտահանումը, խայտառակ ընտրությունները, Հաջիեւի մյցը, Դանիել Իոաննիսյանի եւ Նիկոլ Փաշինյանի համահեղինակությամբ նոր (իրական) սահմանադրությունը… Իսկ գուցե ԱՄՆ-Իրան պատերազմի դադարը կամ ռուս-ուկրաինական հակամարտության վտանգավոր սրացումը…

Հասկանում ենք, չէ՞, որ Նիկոլն ինչքան էլ ճղճղում է, մեջից կիսվում, աջուձախ բոլորին բռնոտում, միեւնույն է, նրա վրա ուշադրություն դարձնող չկա: Դիցուք՝ երեկ չէ առաջին օրը ողջ ազգը, Նիկոլին թողած, Սամվել Կարապետյանի եւ խմբագիրների հարցուպատասխանն էր դիտում-լսում: Մարդիկ սպասում էին, թե ինչ կասի Սամվել Կարապետյանը: Նրանք հոգնել են Փաշինյանի մանիպուլյացիաներից եւ ճղճղոցներից, գիտեն, որ ստում է, ֆռռացնում, գլխիվայր ներկայացնում իրականությունը, գլխի են ընկել, որ նրա ամեն խոսքի մեջ խնամքով թաքցված «ֆաս» հրամաններ կան, այսպես կոչված, իրավապահ մարմիններին: Գյուղատնտեսությունը կատաստրոֆիկ անկումներ է արձանագրում, խայտառակ թանկացումներ ու երկրի դեֆոլտ է սպասվում, իսկ նա ընկել է Վահագն Հովակիմյանի թվանկարչությունը լեգալացնելու, օրեր անց նաեւ լեգիտիմացնելու հետեւից: Ռուսաստանը եւ աշխարհի ավելի քան 100 երկիր չեն ճանաչում սրանց ընտրության արդյունքները, հերսոտած է մի այլ կարգի, սիրտը 2/3 է ուզում, նոր սահմանադրություն է ուզում… Այսպես շարունակի՝ պատերազմը ոչ թե սեպտեմբերին, այլ հուլիսին կամ օգոստոսին է սկսվելու: Ինչ ենք անելու՝ չգիտեմ:

Կներեք, ո՞վ ասաց, որ այսօրվա ամենակարեւոր թեման ծիրանի արտահանումն է. չէի ասի: Ես կարծում եմ՝ կարիք չկա այդ հարցով անհանգստանալու: Փաշինյանն ասել է՝ ծիրանը կսպառենք տեղում, իսկ արտահանման մասով մեզ կօգնեն Հայաստան եկող զբոսաշրջիկները, որոնք ծիրանն այստեղ կուտեն, ու կստացվի, որ արտահանման հարցը լուծվեց: Եկեք չմոռանանք նաեւ մեր հազարավոր թոշակառուներին, որոնք կարող են Լառնակա մեկնել ծիրանի կողովներով: Այդ եղանակով ամեն թոշակառու 10 կգ ծիրան արտահանի Եվրոպա՝ ծով ա… Ֆուռերով տանելն իմաստ չունի: Մի գործարար գրել էր, որ ֆուռով 10 տոննա ծիրան է տարել Եվրոպա, ահագին փող է ծախսել, հիմա էլ կրկնակին է ծախսում, որ եվրոպական համապատասխան կառույցներն այդ բերքը ոչնչացնեն՝ եվրոպական օրենքներն են դա պահանջում… Ելակի փչանալու համար ընդհանրապես չարժե դարդ անել: Թող երեւելի ՔՊ-ականները մտածեն, որ ելակի մաֆիոզ առեւտրով էին զբաղված: Ալո, երեւելիներ, Լարսը ո՞նց ա, Լարսը…

Ասում եք՝ շատ կարեւոր է, որ Հաջիեւն էր Դիլիջան եկե՞լ… Էհ, վրեն, թե չէր եկել: Իբր որ եկել էր, ո՞ւմ մատից փուշ հանեց: Մի բան էլ Նիկոլին ավելի կատաղեցրեց, գցեց մեր ջանին: ՔՊ-ով գնացին Հաջիեւի դուռը, ոտքերն ընկան, ասին՝ չի ստացվում, Հաջիեւ ջան, Վահագը 2/3 չի կարողանում նկարել, սահմանադրությունը փոխել չի լինի… Սա էլ փրփրել է, թե դա ձեր պրոբլեմն ա, մեր թագավորը ձեզ դրա համար լիուլի ժամանակ է տվել, պիտի փոխեք… Էլ չիմացա՝ Հաջիեւը Նիկոլին տեսա՞վ, չտեսա՞վ… Ես մենակ Նիկոլի շարասյան արշավն եմ տեսել դեպի Դիլիջան ու մեկ էլ Թորոսյան Արսենի լայվը, թե բա՝ հեծանիվ ենք քշում, հասել ենք Սեւան: Փաստորեն, Թորոսյան Արսեն, դու այսքան բանից հետո դեռ հեծանիվ ե՞ս քշում…

Կարճ ասած՝ ոչ մի կերպ չեմ կողմնորոշվում, սիրելի ընթերցող, թե որն է օրվա ամենակարեւոր թեման: Նիկոլն այնպես չի խառնել ամեն ինչ, որ մարդ հասկանա իր անելիքը: Հայաստանի կեսին հայտարարել է կաշառակեր ու մնացել իր հայտարարության տակ: Հիմա էլ ջանք ու եռանդ չի խնայում կաշառք տվողներին հայտնաբերելու եւ բանտերը լցնելու համար: Մարդ առավոտ արթնանում է՝ չգիտի կեսօրին ինչ կարգավիճակ կունենա՝ ընտրակաշառք տվողի՞, ընտրակաշառք վերցնողի՞, թե՞, առհասարակ, ՀՀ քաղաքացիությունից զրկվածի: Պատճառն էլ այն է, որ Փաշինյանը 2/3 չունի: Կներեք, բայց նրա 2/3-ն ինձ ի՞նչ է տալու, կասե՞ք: Շուտով գազը կթանկանա, դրա հետեւից էլ՝ ամեն ինչ, ընդհուպ մինչեւ քաղաքային տրանսպորտ ու հաց: Դեռ տաք են, չեն հասկանում, թե ինչի կարող է հանգեցնել դոլարի եւ ռուբլու փախուստը Հայաստանից: Մինչ օրս նման բան չէին տեսել՝ փող կար, ծախսում էին ու մեծ-մեծ խոսում: Ի՞նչ են անելու այս թշվառները, երբ հայկական փակ շուկայում դրամը միայնակ մնա ու սկսի ազատ անկմամբ արժեզրկվել: Պարոն Սուքիասյան, ադրբեջանական մանաթից ի՞նչ լուր կա, չե՞ք ուզում մի քիչ ներկրել, ժողովրդին մանաթով աշխատավարձ, թոշակ ու վարկեր տալ…

Ի դեպ, խաչատուր Սուքիասյանն ու Սամվել Ալեքսանյանն էլ պակաս կարեւոր թեմաներ չեն այսօր: Մենք նրանց հանիրավի մոռացել ենք, մինչդեռ նրանց վարքը Նիկոլի հետ հարաբերություններում խիստ անհասկանալի է: Մենք գիտենք, որ բիզնեսը հայրենիք ու հայրենասիրություն չի ճանաչում, բայց մի՞թե Սամվել Կարապետյանի եւ Գագիկ Ծառուկյանի օրինակը խաչատուր Սուքիասյանին եւ Սամվել Ալեքսանյանին ոչինչ չի հուշում: Նիկոլն ասում է՝ ՔՊ-ի բոլոր ձայներն օրգանիկ են, ՔՊ-ում ընտրակաշառք չի «ֆռռացել»: Կներես, բայց ես այդ թեզին չեմ հավատում, քանզի տեսնում եմ, թե ինչպես Ծառուկյանի 60 հազար ձայնը տակով արեցիք՝ կուլ տվեցիք… օրգանիկը տե՞նց ա լինում:

ՀԳ. *Օրվա թեմա գտեք, օրվա թեմա: Հեռացող Նիկոլն արդեն մեզ ապագա չէ:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՀՀ ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սկիզբը՝ նախորդ համարում

Արմեն Մարտիրոսյան
ՀՀ ԳԽ եւ ԱԺ պատգամավոր (1990-99 թթ.)
ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ», ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ ԵՎ ԲԱՆԿԵՐԻ ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Շարունակելով ՀՀ ԿԲ նախագահ Մարտին Գալստյանի մեկնաբանությունների վերլուծությունը՝ ընդգծենք, որ բարձր վարկային տոկոսադրույքների հարցը չի կարելի դիտարկել միայն բանկի եւ վարկառուի հարաբերության շրջանակում: Այն առնչվում է նաեւ Հայաստանի տնտեսական եւ քաղաքական միջավայրի ավելի լայն գործոնների հետ: Դրանցից մեկը հռչակված «խաղաղության օրակարգի» եւ կապիտալի փաստացի արժեքի շաղկապվածությունն է:

Հայաստանի կառավարությունը «խաղաղության» օրակարգը դիտարկում է նաեւ որպես աշխարհաքաղաքական ռիսկի նվազեցման գործոն: Ուստի, 2025թ. օգոստոսի 8-ին, այսպես կոչված, խաղաղության համաձայնագրի նախաստորագրումից հետո կարելի էր ակնկալել, որ դրանից բխող քաղաքական լավատեսությունը կարտացոլվի ֆինանսական սպասումներում՝ ռիսկի գնահատման եւ վարկավորման արժեքի մեջ: Սակայն ֆինանսական շուկան փաստացի չարձագանքեց:

Սա, իհարկե, չի նշանակում, թե վաշինգտոնյան գործարքը պետք է անմիջապես հանգեցներ տոկոսադրույքների նվազման: Սակայն եթե աշխարհաքաղաքական ռիսկն իսկապես էապես նվազել է, ապա ինչո՞ւ դա չի արտացոլվում կապիտալի արժեքի մեջ: Հնարավոր է երկու բացատրություն:

Առաջինը. բանկերը, ներդրողները եւ կարգավորողը նախաստորագրումը չեն ընկալում որպես կայուն խաղաղության բավարար երաշխիք: Ֆինանսական շուկայի համար կարեւոր են ոչ այնքան դիվանագիտական ձեւակերպումները, որքան պայմանավորվածությունների իրագործման հեռանկարը, ռազմական սպառնալիքի վերացումը, միջպետական սահմանների հստակեցումը, հաղորդակցությունների ապաշրջափակումը, տարածաշրջանային գործընթացների կանխատեսելիությունը եւ խաղաղության ինստիտուցիոնալ երաշխիքները:

Երկրորդ բացատրությունն այն է, որ վարկի բարձր արժեքը Հայաստանում պայմանավորված է ոչ այնքան արտաքին քաղաքական ռիսկով, որքան ներքին սահմանափակումներով, ինչպիսիք են՝ ֆինանսական շուկայի թերզարգացածությունը, արժեթղթերի շուկայի չափազանց ցածր կապիտալիզացիան, ֆինանսավորման այլընտրանքային գործիքների սահմանափակությունը, երկարաժամկետ դրամային ռեսուրսների պակասը, գործադիր իշխանության միջամտությունն արդարադատությանը, բիզնեսի ցածր թափանցիկությունը եւ գրավային ենթակառուցվածքի որակը:

Ներքին սահմանափակումների շարքում կարեւոր տեղ ունի նաեւ պետական փոխառությունների ծավալի աճը: Հայաստանում ֆինանսական շուկան թերզարգացած է, իսկ երկարաժամկետ դրամային ռեսուրսները՝ սահմանափակ: Այդ պայմաններում պետական պարտատոմսերը բանկերի համար դառնում են անհամեմատ ապահով եւ կայուն եկամտի աղբյուր, եւ ֆինանսական կառույցները հաճախ նախընտրում են միջոցները տեղաբաշխել պետական պարտատոմսերում, քան ավելի ռիսկային վարկեր տրամադրել փոքր եւ միջին բիզնեսին: Նման հանգամանքներում բիզնեսի վարկավորումը պահանջում է լրացուցիչ ռիսկային հավելավճար: Արդյունքում ներքին փոխառությունների աճը նպաստում է տոկոսադրույքների բարձր մակարդակի պահպանմանը եւ մասնավոր հատվածի դուրսմղմանը մատչելի ֆինանսավորման շուկայից: Սա չի նշանակում, թե պետական պարտատոմսերն ինքնին անցանկալի գործիք են: Խնդիրն այն է, որ թերզարգացած ֆինանսական շուկայում դրանք կարող են վերածվել մասնավոր բիզնեսի ֆինանսավորման այլընտրանքի՝ նվազեցնելով վարկավորման խթանները:

Հետեւաբար, բարձր տոկոսադրույքները պետք է դիտարկել ոչ միայն ռիսկայնության, այլեւ ֆինանսավարկային կառույցների եկամտաբերության տեսանկյունից: Հայաստանի բանկային համակարգը, համեմատած տնտեսության այլ ոլորտների հետ, ցուցադրում է կայունություն եւ բարձր շահութաբերություն: Հատկապես կարեւոր է այն, որ բանկերի եկամուտների զգալի մասը ձեւավորվում է տոկոսային եկամտի հաշվին:

Սա նշանակում է, որ վարկի բարձր արժեքը միաժամանակ իրականացնում է երկու գործառույթ. այն փոխհատուցում է ԿԲ նախագահի հիշատակած ռիսկերը եւ ապահովում բանկային հատվածի բարձր շահութաբերությունը: Հետեւաբար, տոկոսադրույքների քննարկումը չպետք է շրջանցի բանկային մարժայի կառուցվածքը, պետական արժեթղթերի այլընտրանքային եկամտաբերությունը եւ այն հարցը, թե ինչպես են բարձր տոկոսային միջավայրի օգուտները բաշխվում ֆինանսական հատվածի եւ իրական տնտեսության միջեւ:

Այսպիսով, բարձր տոկոսադրույքը լոկ տնտեսվարողի կարգապահության կամ միջազգային միջավայրի արդյունք չէ, դա մեզանում հաստատված ֆինանսական համակարգի կառուցվածքի հետեւանք է, դիցուք՝ թե ինչպիսի գործիքներ են հասանելի բիզնեսին, որքան խորն է կապիտալի շուկան, ինչ խթաններ ունեն բանկերը՝ իրենց ռեսուրսները դեպի իրական տնտեսություն ուղղելու համար:

ԿԱՊԻՏԱԼԻ ԲԱՐՁՐ ԱՐԺԵՔԸ ԵՎ ԱՆՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Կապիտալի բարձր արժեքի վերաբերյալ ԿԲ նախագահի մեկնաբանությունները մի շարք հարցեր են թողնում անպատասխան, հատկապես՝ այն առումով, թե ինչու է Հայաստանում վարկավորման վերջնական տոկոսադրույքը շարունակում բարձր մնալ: Այդ խնդիրն առավել տեսանելի է համեմատության մեջ: Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի եւ Վրաստանի հետ համեմատությամբ ներկայում հենց Հայաստանում է Կենտրոնական բանկի եւ շուկայական վարկային տոկոսադրույքների միջեւ ամենամեծ տարբերությունը: Այսինքն՝ կապիտալի բարձր արժեքը պայմանավորված չէ միայն բազային տոկոսադրույքով կամ գլոբալ դրամավարկային միտումներով:

Վերջնական տոկոսադրույքը մեծապես ձեւավորվում է Հայաստանի ֆինանսական համակարգի ներսում՝ պայմանավորված բանկային ռիսկային հավելավճարով, շուկայի կառուցվածքով, երկարաժամկետ ռեսուրսների սահմանափակությամբ, դատաիրավական ռիսկերով եւ ինստիտուցիոնալ միջավայրի որակով: Այս ամենը կարեւոր է, քանի որ ցույց է տալիս՝ խնդիրը չի սահմանափակվում ԿԲ-ի տոկոսադրույքային քաղաքականությամբ կամ վարկառուների որակի մասին դատողություններով:

Այս տեսանկյունից լրացուցիչ պարզաբանման կարիք ունի նաեւ ԿԲ նախագահի հղումը միջազգային միտումներին: Աշխարհում տոկոսադրույքների աճը, անշուշտ, ազդում է կապիտալի արժեքի վրա, հատկապես՝ փոքր եւ բաց տնտեսություններում: Սակայն դա չի բացատրում, թե ինչու է այդ ազդեցությունը Հայաստանում վերածվում բարձր եւ կայուն վարկային տոկոսադրույքների: Դրա համար պետք է պարզել, թե արտաքին գործոններն ինչպես են փոխանցվում ներքին շուկային՝ դրամային ռեսուրսների արժեքի, գնաճային սպասումների, արժութային ռիսկերի եւ բանկերի վարկային քաղաքականության միջոցով: Առանց բացատրության՝ միջազգային միտումներին հղումը հիմնախնդիրը տեղավորում է գլոբալ համատեքստում, բայց չի բացահայտում Հայաստանում վարկի բարձր արժեքը ձեւավորող հիմնական պատճառները: Այլ կերպ ասած՝ գլոբալ միջավայրը կարող է բացատրել ճնշման մի մասը, բայց ոչ այն ամբողջ մեխանիզմը, որի միջոցով անարդյունավետ ինստիտուտները, բարձր գործարքային ծախսերը (transaction cost), իրավական անորոշությունը եւ կարգավորման ռիսկերը հանգում են կապիտալի բարձր արժեքի:

Մեկ այլ դիտարկում վերաբերում է ԿԲ նախագահի այն մոտեցմանը, ըստ որի՝ բարձր տոկոսադրույքների պատճառներից մեկը պայմանավորված է բիզնեսի ֆինանսական կարգապահությամբ: Անշուշտ, Հայաստանում շատ ձեռնարկություններ դեռեւս ունեն հաշվետվողականության եւ ֆինանսական թափանցիկության լուրջ բացեր, ինչպես նաեւ՝ բանկային համակարգի պահանջներին համապատասխանող ներդրումային ծրագրեր կազմելու սահմանափակ փորձ: Սակայն սա միայն ձեռնարկատերերի պատասխանատվության հարց չէ:

Նշված բացերն ավելի խորքային ինստիտուցիոնալ թերությունների հետեւանք են՝ պայմանավորված հարկային վարչարարությամբ, բիզնես կրթության որակով, խորհրդատվական ծառայությունների հասանելիությամբ, պետության նկատմամբ վստահությամբ, կարգավորման կանխատեսելիությամբ եւ սեփականության իրավունքի պաշտպանությամբ: Եթե համակարգը չի ձեւավորել թափանցիկ վարքագծի խթաններ, ապա բարձր տոկոսադրույքները չի կարելի բացատրել բացառապես վարկառուների կարգապահությամբ:

Մեկ այլ կարեւորագույն խնդիր է երկարաժամկետ դրամային ռեսուրսների պակասը, որը պայմանավորված է ոչ թե խնայողությունների ծավալով, այլ դրանց կառուցվածքով: Հայաստանում համախառն ներքին խնայողությունները կազմում են ՀՆԱ-ի մոտ 20%-ը, սակայն այդ միջոցների զգալի մասը պահվում է կարճաժամկետ եւ իրացվելի ձեւով: Տնտեսական եւ քաղաքական անորոշությունը, գնաճային ու արժութային ռիսկերը տնային տնտեսություններին եւ բիզնեսին մղում են ապահովել միջոցների արագ հասանելիությունը, իսկ կապիտալի շուկայի թերզարգացածությունը, երկարաժամկետ գործիքների պակասը եւ ինստիտուցիոնալ ներդրողների սահմանափակ դերը թույլ չեն տալիս խնայողությունները վերածել երկարաժամկետ ներդրումային կապիտալի: Արդյունքում բանկերի ռեսուրսային բազան հիմնականում մնում է կարճաժամկետ, իսկ երկարաժամկետ վարկավորումը՝ ավելի ռիսկային եւ թանկ:

Ուստի բարձր տոկոսադրույքների հարցում առավել արդյունավետ կլիներ, եթե քննարկումների առարկա դառնար ոչ թե «լավ» եւ «վատ» վարկառուների տարբերակումը, այլ ավելի հիմնարար հարցը՝ ինչու է ազգային տնտեսությունը շարունակում ընկալվել որպես բարձրռիսկային: Եթե բիզնեսը ստիպված է վճարել դրանով պայմանավորված հավելավճար, ապա խնդիրը ոչ այնքան վարկառուների որակն է, որքան քաղաքական, տնտեսական, դատաիրավական եւ ֆինանսական համակարգերի այն կառուցվածքային առանձնահատկությունները, որոնք վերարտադրում են կապիտալի բարձր արժեքը:

Հենց այստեղ է ԿԲ նախագահի մեկնաբանությունների հիմնական բացթողումը. դրանք չեն բացահայտում բարձր տոկոսադրույքների համակարգային պատճառները: Ուստի խնդիրը պահանջում է ավելի համապարփակ մոտեցում, որն այն կդիտարկի ոչ միայն դրամավարկային, այլեւ ինստիտուցիոնալ, ֆիսկալ եւ տնտեսական քաղաքականության համատեքստում: ԿԲ-ն պատասխանատու է նախեւառաջ գների կայունության համար, մինչդեռ վարկերի հասանելիությունը, ներդրումների խթանումը եւ կապիտալի արժեքի նվազեցումը պահանջում են շատ ավելի լայն գործիքակազմ՝ զարգացած արժեթղթերի շուկա, երկարաժամկետ դրամային ռեսուրսներ, անկախ եւ վստահելի դատարաններ, կանխատեսելի կարգավորում եւ բիզնեսի թափանցիկության բարձրացում: Եթե ԿԲ նախագահը որդեգրեր հավասարակշռված դիրքորոշում, ապա կընդուներ, որ բարձր տոկոսադրույքները Հայաստանում պայմանավորված են համակարգային սահմանափակումներով: Այդ դեպքում քննարկման առարկան կլիներ ոչ միայն այն, թե ինչու մեկ ձեռնարկատեր վարկ է ստանում 11 տոկոսով, իսկ մյուսը՝ 19 տոկոսով, այլ՝ այն, թե ինչու է Հայաստանի տնտեսությունը շարունակում ընկալվել որպես բարձրռիսկային:

Քանի դեռ այս հարցը չի քննարկվում ամբողջ խորությամբ, բարձր տոկոսադրույքների բացատրությունը կմնա հատվածական: Համակարգային խնդիրը պահանջում է համակարգային լուծում. այն պետք է լինի դրամավարկային, ֆիսկալ, ինստիտուցիոնալ, իրավական եւ տնտեսական քաղաքականությունների համադրված արդյունք:

*Հարցազրույց քաղաքագետ **Նվարդ Մանասյանի** հետ*

ՎԹԱՐԱՅԻՆ ՇԵՆՔՈՒՄ ԱՐԹՆԱՆԱԼՆ ՈՒ ՉԳՈՐԾԵԼԸ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՆ

- Կայացան ԱԺ ընտրությունները, ինչ սպասենք՝ հաշվի առնելով ընտրությունների արդյունքները:

- Պայմանական ընտրություններից հետո երբեք սպասելիք չի լինում: Այս ընտրությունները պայմանական էին այնքանով, որքանով ազատ խոսքն այս տարիների ընթացքում որեւէ արտահայտչամիջոց եւ հարթակ չի ունեցել, եղել են պարտադրված 2 հակառակ եւ ծայրահեղ թշնամական ճամբարներ, որոնց միջեւ ՀՀ քաղաքացին ստիպված է եղել դիրքորոշվել: Սակայն ես այս տարաբախտ անցյալն արդեն ուզում եմ փակել եւ թողնել պատմությանը: Այս օրերին շատ էի հիշում Մոնթե Մելքոնյանի մասին պատմությունը, երբ զավթված, հայաթափվող Արցախում հայկական զինված միավորումների հետ քննարկել էր հաղթանակի մարտավարությունը: Առաջարկում եմ՝ մենք էլ հիմա կենտրոնանանք մեր հաղթանակի վրա, եւ բոլորովին կարեւոր չէ, թե ինչ սպասենք ԱԺ-ից, իրական գործընթացներն այլեւս զարգանալու են այդ շենքից դուրս՝ առաջնորդվելով մեր երկրի հիմնարար օրենքի՝ Սահմանադրության սկզբունքներով:

- Ինչ կարող է անել իշխանությունն իր 64 մանդատով եւ ուր է ուզում տանել երկիրը:

- Սահմանադրության արտոնած 3/5 մեծամասնությամբ իշխող ուժը կարող է ամեն ինչից առավել այնպես ձեւափոխել սահմանադրական օրենքները, որ մենք գլորվենք հանրապետականության քողի ներքո թաքնված բռնապետության հատակը: Պետք է նշեմ, որ հետընտրական իշխանական շրջանակի հռետորաբանությունը միանձնյա ձեւավորվող տոնայնություն է, նշմարում է այն հնարավոր չակերտավոր հեղափոխական ուղղությունը, որը սնանկացավ անցյալ հազարամյակում: Չեմ ուզում մանրանալ. այդ հռետորաբանությամբ, գուցե հակասական հնչի, իշխանությունը հայտնվել է ծուղակում: Ատելության երկարատեւ քարոզը չի կարող կառավարելի մնալ, այն չնայած ուղղորդված ստեղծվել էր, ավելի շուտ՝ էսկալացվել, հաշվի առնելով անցյալի սխալներն ու անարդարությունները, սակայն նույն արդյունավետությամբ չի աշխատում, երբ իշխանության լծակները տնօրինում ես երկարատեւ 8 տարի: Այդ ատելության մթնոլորտում շատ դյուրին է նետն ուղղել դեպի օրվա կառավարիչներն ու մահացու գրկախառնության մեջ խեղդվել ու խեղդել հանրապետությունը: Բացատրեմ, թե ինչպես: Թափ առնող ատելությունը կառավարելու մղմամբ՝ իշխող ուժը ստիպված եղավ գնալով ավելի բեւեռացնել հասարակությունն այնքան, որ մենք հասել ենք բռնության ավելի կոշտ ձեւերին դիմելուն: Պատահական չէ, որ իշխանությունը մահու չափ սարսափում է հակազդման որեւէ դրսեւորման հեռանկարից՝ այնքան, որ ծիծաղելի է, բայց մարդիկ սովորական հայերեն բառերի համար լրացուցիչ բացատրություն են տալիս, որպեսզի անհարկի հարցաքննության չենթարկվեն: Նման բան հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ՝ 1905-ին ցարական Ռուսաստանում էր, երբ բառերի արգելված ցանկ էր կիրառվել: Մենք այդ կետին շատ մոտ ենք: Մինչ այդ մենք այլեւս չենք կարող դիտողի դերում նայել, թե ինչպես է մսխվում ժողովրդի ստեղծարար ներուժը: Եվ ինչ էլ անեն ԱԺ-ում հայտնված ուժերը, պետության տեսանկյունից այլեւս էական չէ: Որքան շուտ հասկանանք դա, այնքան շուտ կազատվենք այդ կեղծ փակուղուց: Հավատացեք, դա մեր երկրի ու բնակչության մի փոքրիկ հատվածն է, մենք իրականում ավելի շատ, բազմազան ու գունեղ երազանքներ ունենք, եւ ժամանակն է՝ խոսելու դրանց մասին առանց կաշկանդման: Սա մեր երկիրն է, ու մենք ոչ մի տեղ արտագաղթելու մտադրություն չունենք: Ես դիմում եմ այս պահին մեզ կարդացողների այն հատվածին, որն այս զգացողությամբ է արթնանում իր հայրենիքում եւ գոհունակությամբ ու երջանկությամբ է կառուցում իր կյանքը մոլորակի փոքրիկ այս կտորի վրա:

- Ժողովուրդն իր ընտրությունն արել է: Ինչ պետք է անի ընդդիմությունը:

- Ժողովուրդն արել է ավելին, քան միայն իր ընտրությունը, 2 կռվող, անհանդուրժող, փոքրոգի բալիկների, չափն անցնող գզվռտոցից ծնված մահացու թշնամությանն ասել է իր իմաստուն ՈՉ-ն ու բաժանել է այս երկուսին իրարից: Ժողովուրդն իր իմաստնությամբ եւս մեկ անգամ ցույց է տվել, որ անգամ այս փոթորկվող շրջանում երկիրը ճոճող տարբեր ուղղություններից եկող ազդակներին կարողացել է դիմակայել իր կայունացնող դիրքորոշումներով, որի համար տարբեր կողմերից ինչ պիտակ ասես՝ ստացել է ու լուռ տարել: Ժողովուրդը գործել է իր հավաքական իմաստնության լավագույն դրեւորմամբ: Փոխաբերական իմաստով՝ մի այնպիսի նշաձող է այսօր սահմանված այս քվեարկությամբ, թույլ տվեք այն ընտրություն չանվանեմ, որ թե՛ իշխանությունը, թե՛ ընդդիմությունն այդ լիգայից դուրս են մնացել: Ու ես չգիտեմ, թե ինչ կարող են իրենք անել: Թերեւս հետեւել այս իմաստնությանն ու ժողովրդի կողմից իրենց փոխանցած փխրուն հավասարակշռությունը պահելու հետընտրական ջանքեր գործադրել:

- Ինչո՞վ բացատրել Փաշինյանի խուճապն ու հիստերիան, ինչո՞ւ է այդպես սպառնում:

- Ես քաղաքագետ եմ, ինձ համար դժվար է դիմանկարի ժանրում որեւէ բան առաջարկել: Կարող եմ վստահաբար ասել, որ Հայաստանում աննախադեպ ու շատ գեղեցիկ հորիզոն է նշմարվում: Ամենայն հավանականությամբ, մենք ճահճուտից դուրս գալու շեմին ենք: Հայաստանում 2018-ին ժողովուրդը կարողացավ պետության շարունակվող զավթումը կասեցնել թավշյա հեղափոխությամբ, վստահել մի խումբ առաջամարտիկների ու օրվա իշխանությանը տալ բացառիկ վստահության քվե, հնարավորություն՝ ժողովրդավարական գործընթացներն անդարձելի դարձնելու համար: Բայց այս վերջին ընտրությունները ցույց տվեցին, որ անարդարության մերժումը հարցին լուծում չբերեց: Մենք մերժման շրջափուլի ավարտին ենք հասել ու որպես իմաստուն ժողովուրդ հասկանում ենք, որ երկրորդ անգամ մերժելու անհրաժեշտություն չկա, որովհետեւ անհատական մակարդակում բոլորս մերժված ենք: Մեզ մնացել է վերացարկվել մեր սեփական ես-ից, եւ մտածել այն երազանքի մասին, որն այս տարիների ընթացքում այդպես էլ իրականություն չդարձավ:

- Փաշինյանն ասում է՝ «եռագլուխը» պատերազմ է սադրել: Հավանական պատերազմի մեղքը բարդելու է ընդդիմության վրա:

- Ես կառաջարկեմ շատ չսեւեռվել Փաշինյանի խոսքերի վրա, կարծում եմ՝ ինքն էլ, ընդդիմության առաջնորդներն էլ բոլորիս աջակցության կարիքն ունեն: Մենք պատմական իրադարձությունների շեմին ենք: Կարծում եմ՝ այդ բառապաշարից վերացարկվել է պետք ու հասկանալ, որ պատերազմը մենք սադրում ենք պառակտիչ խոսույթին տրվելով: Մի պահ պատկերացրեք, որ հայ ժողովրդի մահացու ու անդրդվելի թշնամին եք: Երբ է լավագույն պահը, որի ընթացքում որպես թշնամի կարելի է գործել ու ծնկի բերել ժողովրդին: Ակնհայտ է, որ եթե հանրությունն անվերջ պառակտված է ու գործում է ատելության մեջ: Այդ իմաստով պատերազմ սադրում են նախ ատելությունը սփռող հիմնական դերակատարները եւ այդտեղ՝ օրվա իշխանությունը, հետեւաբար, այսօր ՔՊ-ն կրում է պատասխանատվության մեծագույն բեռը՝ որպես օրինակելիության ակնկալվող սուբյեկտ ու երկրում օրակարգ պարտադրող քաղաքական միավոր: Այս իմաստով կարծում եմ՝ Փաշինյանը խոր մոլորության մեջ է, ու շատ ափսոս: Արդարության համար ասեմ, որ մեզնից յուրաքանչյուրը, որն այս պահին չի կարողանում չտրվել պահի գայթակղությանն ու չավելացնել ատելությունը եւս մեկ նոտայով, մոտեցնում է պատերազմը: Այդ իմաստով մենք՝ բոլորս, ունենք մեղքի մեր բաժինը: Այս հատակից այլեւս մեզ մնացել է միայն մեկ ելք՝ քայլ դեպի լույս, դեպի վերելք ու մաքրագործում: Հետեւաբար, ես չեմ ուզում մեզ բաժանել Փաշինյանի, Քոչարյանի, Կարապետյանի, Պետրոսյանի, Սանասարյանի, մյուսների:

- Փաշինյանը խոսում է կաշառքով ձայն ստացած ընդդիմության մասին, կոչ է անում դուրս գալ հրապարակ, հեղափոխություն անել... Հնարավո՞ր են նոր ընտրություններ, երբ թույլ չի տա հիմնական ընդդիմադիր ուժերին՝ մասնակցել ընտրություններին:

- Կարծում եմ՝ շատերս ենք սխալվել, երբ լավ չենք հասկացել, թե ով է երկրում ինքնիշխանը: Ժողովուրդը դուրս կգար, եթե հեղափոխության անհրաժեշտություն լիներ: Դա որեւէ քաղաքական գործիչ, որքան էլ ինքնավստահ լինի, պատվիրել չի կարող: Հեղափոխության համար որեւէ հիմք չկա: Մերժվածներիս մերժելու բան այլեւս չի մնացել: Վերջապես, երկրում դեռեւս չեն սպառվել ինքնիշխանի ձեռքի տակ գտնվող սահմանադրական գործիքները: Մեկ էլ կարծում եմ, որ սադրանքների տրվել պետք չէ, օրակարգը սահմանում է ժողովուրդը, եւ պետք է զգոն լինել: Մեր անկատար Սահմանադրությունը, ի հեճուկս իր խրթին կարգավորումների, մեզ թողել է փառահեղ վերջնախաղի հնարավորություն: Մենք այս պահին տնօրինում ենք սահմանադրական 2/3 մեծամասնությունը, եւ որեւէ կողմ պետք է գա մեր դուռն ու մեկիկ-մեկիկ խնդրի մեր համաձայնությունը: Հեղափոխությունն այս անգամ փողոցային բնույթ չի կրելու, որովհետեւ մեզնից յուրաքանչյուրը, ամեն բան մերժելուց հետո, վերջապես առերեսվելու է սեփական ես-ի ու այն մյուսների հետ չափայնության մեջ դնելու անխուսափելիության հետ: Հիմա շատ լավ պահ է՝ առավոտյան արթնանալու եւ հարցնելու, թե ով ենք ու ինչ ենք ուզում այս կյանքից: Եվ եթե մեզ այդ հարցերի պատասխանը հուզում է, այս աշխարհագրական դիրքից նայելով, մենք չունենք այլեւս որեւէ այլ տարբերակ, քան մեր հայրենիքի մասին պատկերացումների տարուբերումն ու համատեղ կյանքի կազմակերպումը: Սահմանադրությունն այսքան մաշկին մոտ ու հասարակ բան է, որն ինչպես այլ դեպքերում է պատահում, որոշ մասնագետներ չափից առավել են սրբացնում ու գաղտնագրում, հավանաբար՝ սեփական կարեւորությունն անհարկի շեշտադրելու համար:

- Ինչ նկատի ունեք՝ ասելով. «մեզ առավելագույնը մնաց 1 տարի»:

- Այս 2 կողմում ժողովված անբանակցելի չարաճճիներին այս պահին հավասարակշռության բերած ժողովուրդը շատ ժամանակ չունի: Համակարգի քայքայումը մտել է որոշիչ փուլ: Երբ որեւէ կառուցվածքում դիմադրության կետերի քանակը փոքրանում է, մեծանում է փլուզման վտանգը: Փոխաբերական իմաստով, վթարային շենքում արթնանալն ու չգործելը հավաքական անպատասխանատվություն է: Բոլոր նրանք, ովքեր սա տեսնում են, պետք է գործեն, ու բացարձակ կարեւոր չէ՝ քաղաքական գործիչ են, թե տնային տնտեսուհի: Եթե այս արձանագրումն արել ենք, պետք է լծվենք նոր շենքի նախագիծն ու շինարարությունն առանց հապաղման մեկնարկելու գործին: Եթե ՍԴ-ում վիճարկվեն այս չակերտավոր ընտրության արդյունքները, ու դա ձգվի մինչեւ աշուն, դրանից հետո ընդդիմությունը պետք է վճռական որոշում կայացնի: Իշխող ուժը կայացրել է վճռական որոշում եւ վերցրել մանդատները: Ըստ այդմ, իշխանությունն ընդունում է այս ընտրությունների լեգիտիմությունը: Այդ ամենի ֆոնին տարօրինակ են հնչում ընտրակաշառքի մասին պնդումները: Եթե դա իսկապես որոշիչ ազդեցություն ունեցած լիներ, պետք է վերանշանակվեին նոր ընտրություններ: Մանդատները վերցնելու դեպքում ժողովրդին մնալու է շատ քիչ ժամանակ՝ արագացող քայքայման պայմաններում: Անխուսափելիորեն, բռնապետության ձգտող քաղաքական համակարգը գալու է մեր համաձայնության հետեւից, այն ստանալու ճանապարհին առանց խտրականության կիրառելով ձեռքի տակ եղած բոլոր թույլատրելի, անթույլատրելի, ոչ էթիկական ու անգամ օրինականության անվան տակ թաքնված ապօրինությունները՝ մեր համաձայնությունը կորզելու համար: Մենք պետք է այդ պահին ունենանք 2 բան: Առաջինը. պետք է հաղթահարած լինենք պառակտվածությունը: Երկրորդը. պետք է պատկերացում ունենանք, թե ինչ պետություն ենք կառուցում, ու Սահմանադրության մեջ ինչ ամրագրումներ պետք է ներառվեն եւ ինչու: Միակ լուծումը ես տեսնում եմ արտախորհրդարանական՝ համաժողովրդական համախմբման մեջ: Մենք ենք մեր ճակատագրի տնօրենը: Ես շատ կուզեմ, որ պատմության էջերում մեզ նայող մեր ժառանգները հպարտությամբ համակվեն:

Հուսիկ Արա

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԻ ԼՌՈՒԹՅՈՒՆԸ ԼԿՏԻԱՅՐԵՑ ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻՆ

Ազգային Ժողովում Փաշինյանը հայտարարում է, որ եթե Բաքու այցելելու հրավեր լինի, ինքն անպայման կգնա: Այնպիսի տոնով է դա հայտարարում, կարծես խնդրում է Իլհամ Հեյդարովիչին՝ իրեն հրավիրել Բաքու: Իսկ իբրեւ թե Հայաստանի հետ խաղաղության օրակարգ առաջ տանող Ադրբեջանից այլ բան է հնչում: «Մենք երբեք չենք մոռանա, թե ինչ են արել հայկական օկուպացիոն ուժերը մեր ժողովրդի, մեր քաղաքների հետ: Մենք երբեք չենք մոռանա Խոջալուի ցեղասպանությունը, բայց մեզ պետք է նայել դեպի ապագան: Մենք վրեժխնդիր եղանք մարտի դաշտում, եւ դա բավական է: Այս պատերազմը պետք է ավարտվեր, եւ մենք՝ որպես ուժեղ կողմ, խաղաղություն առաջարկեցինք, եւ հիմա խաղաղությունն իրականություն է»,- հայտարարում է Ալիեւը:

Միեւնույն ժամանակ Նախիջեւանում հավաքվում են Հայաստան «վերադառնալ» պատրաստվող իբրեւ թե ադրբեջանցի փախստականները: «Արեւմտյան Ադրբեջանի համայնքի» վարչության նախագահ Ազիզ Ալեքբերլին հայտարարում է, որ Հայաստանը պետք է պայմաններ ստեղծի արեւմտյան ադրբեջանցիների անվտանգ վերադարձի համար: Իսկ Ադրբեջանի կրթության եւ գիտության նախարար Էմին Ամրուլաեւը Նախիջեւանի Օրդուբադ քաղաքում ընթացող «Վերադարձ Արեւմտյան Ադրբեջան» III փառատոն-կոնգրեսի ժամանակ հայտարարել է, որ այս թեման արդեն վերածվել է Բաքվի քաղաքականության «ռազմավարական գործունեության ուղղության»: Սակայն Փաշինյանը շարունակում է հայկական ընդդիմությանը մեղադրել ստախոսության մեջ, թե իբր ոչ մի ադրբեջանցի փախստականների թեմա էլ չկա:

«Հրապարակ» «ադրբեջանցի փախստականների» ու «Արեւմտյան Ադրբեջան» կեղծ եզրույթների մասին զրուցել է միջազգայնագետ **Գրիգորի Բալասանյանի** հետ:

- «Արեւմտյան Ադրբեջան» օրակարգն Ադրբեջանում հռչակել են ռազմավարական ուղղություն, Ալիեւը հայտարարում է, որ իրենք չպետք է մոռանան, թե ինչ են արել հայերն իրենց հետ, Նախիջեւանում հավաքվել են իբրեւ թե ադրբեջանցի փախստականներ, որոնք պատրաստվում են Հայաստան գալ, իսկ Փաշինյանը հուր ու կրակ է թափում ընդիմադիրների գլխին, թե նրանք սուտ լուրեր են տարածում:

- 300 հազար թիվը հենց Ալիեւն է առաջին անգամ հնչեցրել կամ 2022-ին, կամ 2023-ին, Հայաստանում էլ դիսկուրս ծավալվեց, որ, 1989 թվականի տվյալներով, Հայաստանում ադրբեջանցիների թիվը 185 հազարից երբեք չի անցել, որ դա արդեն կեղծիք է, եւ այն հավաստիացումները, որ իրենք խաղաղության են գնում, մեր զգուշացումներն իրականություն են դառնում: Մենք զգուշացնում էինք, որ Ալիեւը որեւէ պարագայում չի գնա որեւէ խաղաղության, դա արդեն երեւում էր, երբ Հայաստանը զիջում էր, իսկ Ադրբեջանը ոչինչ չէր զիջում, եւ նշում էինք, որ Ադրբեջանը երկու ձեռքով վերցնելու է այն ամենը, ինչ մենք տանք: Հիմա, փաստացի, այդ ամենը դրա քաղաքական շարունակությունն է՝ այն, ինչն այսօր տեղի է ունենում Նախիջեւանում: Եվ դա, կարծում եմ, նաեւ մեր չարձագանքելու արդյունքն է, եւ ադրբեջանցիներն ավելի են լկտիացել, հիմա արդեն հատուկ ֆորումներ են անցկացնում, այսպես կոչված, Արեւմտյան Ադրբեջան վերադառնալու հետ կապված: Մինչդեռ այդ հարցը կարելի էր մեկընդմիշտ փակել հենց սկզբից, երբ դեռ սահմանազատման եւ սահմանագծման հարցերն էին քննարկվում՝ կամ դուք այդ դիսկուրսը կդադարեցնեք, կամ որեւէ սահմանազատում չի լինի: Մինչդեռ մենք թույլ տվեցինք, որ նրանք ավելի լկտիանան՝ տեսնելով հայկական կողմից որեւէ արձագանքի բացակայությունը, միջազգային հանրությունն էլ աստիճանաբար պաշտպանելու է նրանց, իրենց ներկայացրած իբր հայրենիք վերադառնալու իրավունքը: Սա է ամենավտանգավորը:

- Իսկ Փաշինյանն ու մյուս ՔՊ-ականներն իրենց հայտարարություններով չլեգիտիմացրի՞ն Բաքվի այս քաղաքականությունը՝ ադրբեջանցիների հետ համակեցության մասին իրենց պարբերաբար հայտարարություններով եւ այլն, եւ այլն:

- Իհարկե, նման դիսկուրսներն էլ ավելի են թեւ տալիս ադրբեջանցիներին: Ադրբեջանցիները, ֆիզիոլոգիապես եւ հոգեպես լինելով սարսափելի վախկոտ, տեսնում են, որ իրենց զառանցանքներին դիմադրություն չկա, դրանց պատասխանող չկա, դա սովորաբար մահմեդականի առանձնահատկությունն է՝ իրենք խաղաղասիրությունը միշտ շփոթում են թուլության հետ: Երբ դու խոսում ես խաղաղասիրությունից, իրենք դա որակում են որպես թուլություն եւ, հետեւաբար, քայլեր են ձեռնարկում՝ ելնելով այդ տրամաբանությունից: Դրա համար ադրբեջանցիների, թուրքերի հետ գործընթացներ սկսելուց առաջ առաջինը ճիշտ կլիներ, որ խորհրդակցեին համապատասխան մասնագետների հետ, եւ այդ մասնագետները նրանց կասեին, որ «ադրբեջանցի փախստական» հասկացություն գոյություն չունի Հայաստանի Հանրապետության տարածքում: Այդ նույն ադրբեջանցիները, այդ ամենը կա ՀՀ պետական արխիվում՝ կադաստրային վկայականներ, իրենք փոխանակել են այստեղի իրենց բնակարաններն Ադրբեջանում ապրող հայերի բնակարանների մի մասի հետ, ստացել են ամբողջական փոխհատուցում եւ տեղափոխվել այնտեղ ապրելու: Այստեղ արդբեջանցիներին չեն ունեզրկել ու կոտորածից մազապուրծ չեն ստիպել ունեցածը թողնել ու գլխապատառ փախչել՝ փրկվելու համար, ինչպես դա եղավ 1988-ին՝ Սումգայիթում, 1990-ին՝ Բաքվում, եւ 2023 թվականին՝ Արցախում: Դրա համար պետք է մասնագետների հետ խորհրդակցել, քարտեզագետների հետ խորհրդակցել, նոր որոշել համակարգված քայլերը, թե ինչպես պատասխանել ադրբեջանցիներին: Բայց քանի որ դա չի արվել, այս պահին մենք պիտի հոգեբանորեն պատրաստ լինենք, որ ադրբեջանցիների խելքին ինչ գա, ասելու են եւ վստահ են լինելու, որ չեն ստանալու որեւէ արձագանք:

- Երբ խոսում ենք հորինովի ադրբեջանցի «փախստականների» մասին, ովքե՞ր են դրանք լինելու: Ադրբեջանում տնավորված, հարազատ-բարեկամ, ընտանիք, աշխատանք ունեցող ադրբեջանցին կթողնի՞ իր տունուտեղը ու կգա իր համար ատելի հայերի մեջ ապրելու՝ անկախ այն հանգամանքից, թե իրենց ինչ տներ կտան ու որքան գումար:

- Այլ հարց է, թե ովքեր կգան. կարող են լինել ադրբեջանական անձնագրերով այլազգիներ՝ օրինակ, աֆղաններ կամ այլ վայրերից բերված մարդիկ, կամ սիրիացի փախստականներ՝ ադրբեջանական անձնագրերով: Հարցն այն է, որ այդ մարդիկ գալու են, ի տարբերություն հայերի, որ, ունենալով ազատագրված Արցախ, չկարողացան այնտեղ բնակեցման հարց լուծել, այդ մարդիկ գալու են: Նրանց հետ միասին նրանց անվտանգությունն ապահովելու համար գալու են նաեւ ոստիկանական որոշակի ստորաբաժանումներ, որոնք տեղակայվելու են նույն այն վայրերում, որտեղ տեղակայվելու են այդ ադրբեջանցիները: Հետեւաբար, նրանց համար բոլոր պայմանները ստեղծվելու են, որպեսզի նրանք գան: Կկարողանա՞ն գալ, կգա՞ն, թե ոչ՝ այլ հարց է, բայց ես ունեմ ներքին համոզմունք, որ նրանք կգան:

Հայկա ԱԼՈՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՁՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 20.06.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԻՆՉ ՃԱԿԱՏԱԳԻՐ Է ՍՊԱՍՎՈՒՄ ՎԱՆԻ ՎԱՐԱԳԱՎԱՆՔԻՆ



Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հողը, որի վրա գտնվում է 8-րդ դարում կառուցված Վանի հայկական Վարագավանք վանական համալիրը, պատկանում է թուրք լրագրող Ֆաթիհ Ալթայլիի ընտանիքին: Վարագավանքը կարեւոր նշանակություն ունի հայկական ճարտարապետության եւ մշակութային ժառանգության համար: Սակայն ավերակներն օրըստօրե ավելի ու ավելի են խոնարհվում ու քայքայվում: Ֆաթիհ Այթայլին հայտարարել է, որ պատրաստ է եկեղեցու տարածքն անվճար փոխանցել Թուրքիայի մշակույթի նախարարությանը:

«Հողը, որի վրա գտնվում է եկեղեցին կամ եկեղեցական համալիրը, ինձ չի պատկանում: Մինչեւ հիմա այդ հողատարածքը գրանցված է պապիս անունով: Եթե մշակույթի նախարարությունը ցանկանում է, թող գան, ես էլ կխոսեմ ընտանիքիս մյուս անդամների հետ: Թող վերցնեն եւ օգտագործեն այն: Թող պետականացնեն առանց փոխհատուցման: Մենք եկեղեցիների սիրահարներ չենք»,- Նիլ Գյուլսյումի հետ զրույցում ասել է Ալթայլին, ըստ «Ալֆանյուզի» փոխանցման: Լրագրողը նշել է, որ հողատարածքը, որի վրա գտնվում է Վարագավանքի համալիրը, որպես սեփականություն անցել է իր ընտանիքի տիրապետությանը: «Ես առաջին ձեռքից հստակ տեղեկություններ չունեմ, սակայն ինձ ասել են, որ երբ կառավարությունը հանրային նշանակության շինություններ է կառուցել ընտանեկան հողատարածքի վրա, փոխանակել է հողատարածքի մի մասն այլ սեփականությամբ, եւ այդ փոխանակված հողատարածքներից մեկի վրա էլ գտնվում է եկեղեցին: Մենք չենք քանդել եկեղեցին, չենք փորձել վաճառել: Այն կանգնած է մինչ այսօր»,- ասել է Ալթայլին:

Վարագավանքի հարցը գտնվում է պոլսահայ համայնքի օրակարգում: Այն բարձրացվել է 2025 թվականի դեկտեմբերին, Հայ առաքելական եկեղեցու Պոլսի հայոց պատրիարք Սահակ Մաշալյանի կողմից՝ Թուրքիայի մշակույթի նախարար Նուրի Էրսոյի հետ հանդիպման ժամանակ: Սահակ պատրիարքը հայտարարել էր, որ Վարագավանքի վերականգնումն ու բացումն այցելուների առաջ զգալի ներդրում կլինի ռեգիոնի տուրիզմի համար եւ կնպաստի մշակութային ժառանգության պահպանմանը: Պատրիարք Մաշալյանը նաեւ հայտարարել էր, որ հիշեցրել է նախարար Էրսոյին, թե պետությունը կարող է այդ եկեղեցին վերցնել իր հովանու տակ: Նախարար Նուրի Էրսոյն էլ հայտարարել է, որ այդ հարցին կանդրադառնան այն ժամանակ, երբ Ֆաթիհ Ալթայլին ազատության մեջ լինի: Այն ժամանակ լրագրողը գտնվում էր բանտում:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am